Ա Ր Ա Ր Ա Տ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՂՊԱՑԻՆ։

ՏԱՐԻ Գ.—ՀՐԱՏԱՆ Զ. 1873 ՏԱՐԻ Ե.—ՄԱՐՏ 31

ԿՐՕՆԱԿԱՆ

ԵՕԹՆ ԽՈՐՀՈՒՐԴՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ.

(Շարունակութիւն)

Դ Ր Ո Շ Մ Ն.

Դրոշմն է խորհուրդ հաստատութեան և կնիք և լուսին շնորհաց Հոգւոյն սրբոյ, որ կմնատակարարուի նոր ժողովրդեան վերայ, որպէս զի (ժողովուրդն) նովաւ նոր զօրութիւն և աստուածային շնորհաց առատութիւն ընդունած՝ Քրիստ. Եկեղեցւոյ անդամ կամ զինուոր դրոշմուի՝ աշխարհիս ամէն չար պատահարաց դէմ պահպանուելով Քրիստոնէական հաւատոք քաջութեամբ խոստովանելոյ, և ամէնայն հակառակորդաց դէմ համարձակութեամբ պաշտպանելոյ համար, որոյ վասն մեր Փրկիչ Յիսուս Քրիստոս խոստացաւ Առաքելոյն, թէ "Ընդէ՞ր զՀոգին ի հասանել Հոգւոյն սրբոյ ի վերայ յԱեր, և եղիջի՞ ինձ վկայ՞ ,, (Գործ. Ա. 8), ինչպէս որ տուաւ խոստացածն։

Դերբ Եկեղեցւոյ հիմնադիր և փրկիչ Յիսուսի Քրիստոսի Աստուածութեան վկայութիւնը եղաւ երկնաւոր Հօրէն (Յովհ. Ժ. 27)՝ յայնժամ սկսաւ (նոր Եկեղեցւոյ մէջ) Դրոշմին խորհուրդը, և ի Յորդանան Քրիստոսի մկրտութեան ժամանակ Հոգւոյն սրբոյ աղաւնակերպ իջնալով նորին վերայ (Ղուկ. Գ. 22), նա և երբ աշակերտք ըստ խոստման Տէառն Ս. Հոգւոյն շնորհաց օծումով կնքուեցան ի վերնատանն (Գործ. Ա. 3, 4.), ինչպէս որ առաքեալներէն ևս Դրոշմի խորհուրդը կատարուելով հաւատացեալ վերայ, — ցարդ կշարունակուի ի Ճշմարիտ քրիստոնեայս։

Առաքեալք երբեմն ձեռնադրութեամբ (Գործ. Ը. 15. 17—18, Ա Թիմ. 6։ — Երբ. Ժ. 2) մատակարարէին այս խորհուրդը, որով հաւատացեալ մկրտեալ ներքուն վերայ Հոգի սուրբ կիջանէր, և իւր շնորհներով կլեցնէր և կոփեւորէր վնասս։

Դրոշմն կկատարուի սուրբ Միւռոնաւ*) և խաչաձև կինքուի մկրտելոյն ճակատին վերայ**), որով իբրև զինուոր կոպատազինուի աշխարհիս փորձանաց ճակատամարտին մէջ սատանայի դէմ շահատակելոյ, և չարին ամեն նետը և մուխը արգելլոյ համար անկեղծ և սրտեռանդն խոստովանութեամբ Քրիստ. հաւատոյ։

Դրոշմին ձև կամ տեսակն է այս բանս. ‘‘Ի–ՊԱՆՈՂ ՅԱՆՈՒՆ ՅԱՅՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՂԵԱԼ Է ՎԵՐԱՅ ԻՆ ԿՆԻՒՐ ԵՐԿՆԱՒՈՐ ՊԱՐԳԵՒԱՑՆ,, ևլն։

Իսկ (Դրոշմի) արարողութիւնը ըստ այսմ կկատարուի։

Հայաստանեայց Եկեղեցին Դրոշմի խորհուրդը անմիջապէս կմատակարարէ զինի Մկրտութեան, ուսոի և մկրտութեան կարգացուած վերջին (Յայնժամ գայ Յիսու և Գալիլէէ) Աւետարանին աւարտուելոյն հետ՝ Հայր ծէր կասէ Քահանային, (ինչպէս անցեալ թուոյ յօդուածիս վերջը կտեսնուի, և ապա Աղ ԷՒ–Ը ՀՆԱԿ շարականը կերգեն, և աւարտուելովն՝ Քահանայն կաղօթէ ՈՐ ԼՈՒԱՒՈՐԵՑԵՔ ՂԱՐԱՊԱՆ՝ ցվերջն։

Յետոյ Քահանայն Միւռոնը կկոչնէ միւռոնատուոյ մէջ՝ ՈՐ ՅԱՒԱՀԱՊՆԱ ՅՕՐԵՆՈՒ շարականը երգելով։

Յետոյ ճակատը կինքէ սուրբ իւղով ասելով ‘‘Ի–ՂԱՆՈՂ,, ևլն։

Իսկ երբ աչաց, ականջաց, հոտոտելոց, բերանոյն, ձեռացն, սրտին, քամակին, և ոտից վերայ օծումը ըստ յաւուկ յատուկ բանից իւրաքանչիւրոյն կաւարտուի, Քահանայն կ’յաւելուածողջունել զնորակնունք դրոշմեալն և ասել, ‘‘ԽԱՂԱՂՈՒԹԻՆ ԸՆԴ ԻՔ ԵՂԻՔ ԱՒՈՒՆ ՅԻՍՈՒՍԻ։ ԽԱՂԱՂՈՒԹԻՆ ԸՆԴ ԻՔ, ՕՁԵԱԼՔ ԱՒՈՒՆ ՅԻՍՈՒ,,, և ինքահայրն կասէ ‘‘ԱՐ ԸՆԴ ՀՈՓՈՒՄՔ ԻՆ Ս,,. և ապա կզգեցուցանէ սպիտակ և նոր հանդերձ, և կկապէ նարօտը, և ինքահօր ձեռքը երկու հատ վառած մոմեր տալով, կասեն Աւուրաց խօսեցաւ և բարչանոյ շարականը, յետոյ Քահանայն կաղօթէ ՕՐՀՆԵԱԼ ԵՒ ԲԱՐԵՒԱՒՈՐՈՂ ԱՒՈՒՆ՝ ցվերջն։

Երբ կատարուի աղօթքը, Քահանայն նորընծայեալը կհանէ ի բեմն՝ ՄՈՒՏ ԱՒԱՆՈՅ սաղմոսը ասելով, և սեղանոյն առաջ խոնարհելով՝ երիցս կհամբուրէ սեղանը ասելով՝ ‘‘(ԱՅՍ ԱՒԱՆԻՆ) ՅԱՒԱՅՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵԱՑ ԱՐԲԵՒՍՏՈՒՆԵՆՔ Ի ՂՊՈՒՆԻՆ, Ի ՂՊՈՒՆԵՆՔ ԱՐԲԵՒՊԱՓԱՌՆԻՆ, ԵՐԲՊԱՏՒՔ ԱՒՈՒՆ ԱՂԱՆՈՅՆ,, ևլն. և Քրիստոսի մարմնոյ և արեան կհաղորդէ զնորընծայն։

Ապա երեք Տէր ողորմեա կասէ և կյաւելու ՓԱՌՔ ԵՂԵՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ՀԱՂՕՐԴՔԸ։

Նորընծայն Ինքահօր դիրկը կտայ, և Քահանայն խաչ ի ձեռին կեցած՝ Աւետարանչաց անուամբ՝ Քահանային կաղօթէ ՈՐ ԼՈՒԱՒՈՐԵՑԵՔ ՂԱՐԱՊԱՆ՝ ցվերջն։

Յետոյ Քահանայն Միւռոնը կկոչնէ միւռոնատուոյ մէջ՝ ՈՐ ՅԱՒԱՀԱՊՆԱ ՅՕՐԵՆՈՒ շարականը երգելով։

Յետոյ ճակատը կինքէ սուրբ իւղով ասելով ‘‘Ի–ՂԱՆՈՂ,, ևլն։

Իսկ երբ աչաց, ականջաց, հոտոտելոց, բերանոյն, ձեռացն, սրտին, քամակին, և ոտից վերայ օծումը ըստ յաւուկ յատուկ բանից իւրաքանչիւրոյն կաւարտուի, Քահանայն կ’յաւելուածողջունել զնորակնունք դրոշմեալն և ասել, ‘‘ԽԱՂԱՂՈՒԹԻՆ ԸՆԴ ԻՔ ԵՂԻՔ ԱՒՈՒՆ ՅԻՍՈՒՍԻ։ ԽԱՂԱՂՈՒԹԻՆ ԸՆԴ ԻՔ, ՕՁԵԱԼՔ ԱՒՈՒՆ ՅԻՍՈՒ,,, և ինքահայրն կասէ ‘‘ԱՐ ԸՆԴ ՀՈՓՈՒՄՔ ԻՆ Ս,,. և ապա կզգեցուցանէ սպիտակ և նոր հանդերձ, և կկապէ նարօտը, և ինքահօր ձեռքը երկու հատ վառած մոմեր տալով, կասեն Աւուրաց խօսեցաւ և բարչանոյ շարականը, յետոյ Քահանայն կաղօթէ ՕՐՀՆԵԱԼ ԵՒ ԲԱՐԵՒԱՒՈՐՈՂ ԱՒՈՒՆ՝ ցվերջն։

Յետոյ Քահանայն Միւռոնը կկոչնէ միւռոնատուոյ մէջ՝ ՈՐ ՅԱՒԱՀԱՊՆԱ ՅՕՐԵՆՈՒ շարականը երգելով։

Յետոյ ճակատը կինքէ սուրբ իւղով ասելով ‘‘Ի–ՂԱՆՈՂ,, ևլն։

Իսկ երբ աչաց, ականջաց, հոտոտելոց, բերանոյն, ձեռացն, սրտին, քամակին, և ոտից վերայ օծումը ըստ յաւուկ յատուկ բանից իւրաքանչիւրոյն կաւարտուի, Քահանայն կ’յաւելուածողջունել զնորակնունք դրոշմեալն և ասել, ‘‘ԽԱՂԱՂՈՒԹԻՆ ԸՆԴ ԻՔ ԵՂԻՔ ԱՒՈՒՆ ՅԻՍՈՒՍԻ։ ԽԱՂԱՂՈՒԹԻՆ ԸՆԴ ԻՔ, ՕՁԵԱԼՔ ԱՒՈՒՆ ՅԻՍՈՒ,,, և ինքահայրն կասէ ‘‘ԱՐ ԸՆԴ ՀՈՓՈՒՄՔ ԻՆ Ս,,. և ապա կզգեցուցանէ սպիտակ և նոր հանդերձ, և կկապէ նարօտը, և ինքահօր ձեռքը երկու հատ վառած մոմեր տալով, կասեն Աւուրաց խօսեցաւ և բարչանոյ շարականը, յետոյ Քահանայն կաղօթէ ՕՐՀՆԵԱԼ ԵՒ ԲԱՐԵՒԱՒՈՐՈՂ ԱՒՈՒՆ՝ ցվերջն։

(*) Ցարմար առիթ պիտի ունենամ Միւռոնի և սորա օրհնութեանն արարողութեան վերայ գրելոյ։

(**) Անցեալ ամսոյ յօդուածոյ մէջ պէտք էր յաւելացնել, զի Եթովպացիք՝ նոր մկրտեալին երեսը կխաչեն տաքացուցած երկաթով, իբր զի Քրիստոսի այս խօսքը թէ ‘‘Դուք մկրտիցէք ի Հոգին սուրբ և ի հուր,, ճիշդ կատարած կլինին, և իբրև ի պարծանս իւրեանց դէմքերուն վերայ կկրեն խարած նշանն, մինչդեռ գրեթէ մի և նոյն նշանակութիւն ունին ի Հոգին սուրբ և ի հուր ասելը, որ է Հոգւոյն սրբոյ իբրև հուր կիզող մաքրելը զՀաւատացեալն ի մեղաց ևլն։ Արդարև անպատշաճ և աւելորդ սովորութիւն։

կաւադն կ՚քարոզէ Սո՛ւբ խաչե՛ս. Օ՛ձինի Քահանային կաղօթէ Ուխ Ղեւոնեան և լո՛ւսաւո՛ւչեան. և ի վերջանալն կ՚համբուրուին նորահնուածքը, և կերգուի շարական Ոչ անխե և անժնին: Յետոյ Սո՛ւբ խաչե՛ս կ՚քարոզէ սարկաւագն, և քահանային կասէ պահպանել, և ՚ի՛սպէ ձեզ:

Լսա այսմ կվերջանայ Վրոշմի խորհուրդը:

(Շարունակելի).

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն):

Գլուխ Գ

Ճանապարհորդութիւն ի կախէթ. — Աւանդութիւն Օձալերին. — Որով եղանակաւ պատրաստեն ղինի ի կողմանս. — Ջերմն աղբիւր. — Աւանդութիւն. — Ամրոց Սուրամայ. — Քնեաղ Աբխազով. — Դիտողութիւնք ի վերայ սվանեթի. — Երթ ի վանս Ս. Նունեայ. — Աւանդութիւնն. — եկեղեցին. — Արուխնք Քաճանայից. — Գարմ ի Ցխինվալ. — Երթ ի Հայաստան. — Քարվանտարայ պիւղ Հայոց. — Դիտողութիւնք զբնակչաց կողմանց Գանձակայ. — Հայոց մեկնք եւ թուրքաց բէկ. — Ծով Գեղամայ. — Աւանդութիւնն ղևանկիամուրայ. — Արարատ. — Երեւան. — Թէ ուստի էառ դայս անուն. — Վաճառանոցն Երեւանայ. — Ջրանցք եւ առուք:

ՋՆախնեթէ ասէին ինձ լինել Էլ-դորատան 47) Կովկասու, երկիր՝ ուր Հոսի կամն և մեղը և գինի. ուր գտանին պտուղք ամենակերպ բարութեանց. ուստի եղի ի մտի տեսանել զկողմանսն: Վասն որոյ ի 10 Օգոստոսի ի գիշերային պահու առեալ ընդ իս զիշխանն Լիվին, և զմտերիմն իմ զՊետրոս Նկ, ուղղեցաք զընթացս մեր ի Կա-

(47) Էլդարատո քառ. Սպաներէն և նշանակէ «ոսկեօծեալ». անուամբս այսու կոչի երեւակայեալ երկիրն հարաւային Ամերիկայի, որ լի է իբր թէ ոսկւով և ակամբք պատուականօք:

խէթի. և յերրորդ ժամու մուտ կալաք ի Մարիենֆիլդ աւանն գաղթականացն Գերմանացւոց, որ անկանի առ գետովն Յորի, այն է Կամբիւս, առեալ զանունս ի Կիւրոսէ, ի պատիւ Հօր Նոբա*). կացեալ աստանօր մինչև ցեօթն ժամ առաւօտու, փոխեցաք զուղի մեր ի ձախակողմն, և շրջեալ լերանց ի լերինս Հասաք ի լեառն մի, անուանեալ «Օձալեառն», ուստի առիթս առեալ Պետրոս Նկ պատմեաց մեզ զաւանդութիւն ինչ ի վերայ այլոց «Օձալերին»:

Օձալեառն առ Երասխաւ.

Առ Երասխաւ ի հարաւակողմն Նախիջևանի անկանի լեառն, անուանեալ ի Տաճկաց «Իլանդաղը», և ի Հայոց «Օձասար», — օձալեառն — 48): Ի ժամանակս ինչ տարւոյն ժողովին անդանօր անհամար բազմութիւն օձից մինչև անհնարին լինել մարդկան և կենդանեաց մատչիլ ի նա. թող զսովորականն: Գտանին անդ և տեսակք երկիւղալի և վնասակար սողնոց: Օձ ինչ, եթէ ցհասանիցէ 25 ամաց եկաց մնայ անտես ի մարդկանէ, առնու զզօրութիւն կերպարանափոխութեան, այն է կարէ փոխիլ ի կենդանիս ևլն. որով պատրեալ և որսացեալ զմարդիկ սպանանէ զնոսա. և եթէ հասանէ ցվեցամանեայ հասակ, դարձեալ անտես ի մարդկանէ, անուանի ըստ Պարսից «Իւքի», (տարածումն). իսկ եթէ ցեօթանասնամեայն, յայնժամ ըստ հաճոյից առնու զկերպարանս մարդոյ և անասնոյ: — Դէպ լինի երիտասարդ հովուի ուրուքն անջատիլ ի թաւխառական բազմութեանցն և մնալ ի շրջակայս նորա. տարուբեր ի յայլս խորհրդոց մտաց ընթանայ յայսկոյս և յայնկոյս, և տեսանէ ի մէջ թփոց զօրիորդ չքնաղատեսիլ զի լայ և հնձէ զառնապէս. և հարցեալ՝ պատմէ թէ յետս կացեալ յաղգա-

(*) կուր գետ ևս էառ զանունն ի կիւրոսէ արքայէն Պարսից, վերք զոյս գետ ի ժամանակս Շարդենայ կոչեին Շահբանման նոյն անուն, զոր պատմիչք Պարսից ասին Կիւրոսէ:

Հեղ.

(48) Լեառն, զորմէ բանիգդ են արդեօ Ճանապարհորդին, հեռի է յերասխայ իբր երիք ժամու Ճանապարհ. զորմէ անդրէն ի մեր «Հնութիւնս հայրենեաց երկրիս»:

կանացն, ոչ ևս կարէ գտանել զՀայրենիս իւր։ Գթացեալ Հովիւին առնու նստուցանէ ընդ իւր ի ձի առ ի ածել ի ցանկացեալ տեղին. այլ ի ճանապարհին սէր կապէ մին ի միւսն, և յայնժամ խոստովանի աղջիկն, թէ չէր իմ ոչ Հայրենիք, և ոչ Հայրենակիցք, միայն զայս արարի ասէ առ ի որսալ զքեզ, վասն զի ընդ առաջին և եթ ակնարկեալ ի քեզ՝ սիրեցի զքեզ. ուստի տանէ զնա Հովիւն ի տուն իւր, և ամուսնանայ ընդ նմա։

Փայ առ նա յաւուր միում Փաքիր ոմն Հընդկացի, որոյ ուներալ ի ձեռին զմատանի՝ յորոյ վերայ էր եղեգնաքար, զիտաց անդէն թէ կինն այն՝ է օձ կերպարանափոխ, վասն զի եղեգնաքարն խափանէ զկերպարանափոխութիւն մերձակայ իրին. յայտնեաց առն զիրան, և ի հաւատարիմ կացուցանել զբանս իւր, ասէ ցնա, ,, պատուէր տուր կնոջդ պատրաստել զսիրեցեալն իւր կերակուր և գաղտ ի նմանէ արկ ի նա աղ առաւել յոյժ, ապա ամրափակեալ զդրունս հեղ զջուր ի մէջ տան, և ցոյց զքեզ իբր ի խոր քուն լինել,,։ Արար այրն ըստ բանի նորա, և ի պիշերի տեսանէ զի ահա յարեաւ կինն ի խնդիր ջրոյ և չգտեալ ինչ, արտաքս եհան զպլուխ իւր յրմպել անտի. զայս տեսեալ առն դիմէ ի միւս օրն առ Փաքիրն խնդրել ի նմանէ հնարս կորուսանելոյ զնա. իսկ Նա խորհուրդ տայ նմա, զի պատուիրեսցէ կնոջն թրել զՀաց, և յորժամ խոնարհեսցի ասէ կինն ի թոնիր առ ի կողել զգուշդ խմորոյն, արկ զնա ի բորբոքեալ հուրն, փակեա զբերան նորա քարիւ և մի՛ բնաւ հանել անտի, ոչ ի ճիչ նորա և ոչ ի պաղատանս գթացեալ. ապա թէ ոչ՝ կորուսցէ զքեզ։ Ցորժամ արար այրն զայս ամենայն, աղաչէր կինն զի Հանցէ զնա. ,, զԹա՝ ասէ՝ ի հաւատարիմ ամուսին քոյ,,. այլ իբրև ոչ լուաւ, կրկնեաց, Փաքիրն որ ծարաւի է արեան իմոյ, մերկացաւ քեզ զգաղտնիս իմ. իմ իսկ կորուսեալ էր զքեզ, թէ գիտէի յայնմ եղև քեզ իրքն։ Ցետ մահու նորա ժողովեաց Փաքիրն զիշոչի մարմնոյ նորա առ ի փոխել նովաւ զմետաղս յոսկի. զի ասի թէ՝ գոյ ի նմա զօրութիւն ինչ այսպիսի. իսկ այրն՝ որ յանչափս սիրէր զկինն, յայնմ օրէ անմխիթար և յուսաթեկ, ծածկեցաւ յամբոխէ մարդկան։

Լուաք զի Հայք ասեն թէ՝ օձք ոչ երբէք ևրևին Եւրոպացւոց. և զարձեալ՝ իբր թէ Իսկենտէր (մեծն Աղէքսանդր) բնակեցոյց զկանայս իւր ի վերայ լերինս այսմիկ, և Թուվեալ օձք տեղւոյն զգուշանան պահպանութեան նոցին։

Աւանդութիւն ինչ լուաք և ի լինելս մեր ի Նախիջեւ, մերձ ի գիւղն Գուրկան. էր փոքրիկ բոլորաշրջան լիճ մի. ջուր նորա պղտոր և ի միշտ յուզման ի պատճառս յորդահոս բղխման աղբերըն ջերմաջրոյ, որ կայր ի միջակետի նորա. և ասեն թէ էր յառաջագոյն ի տեղւոջն լճին տուն շահամոլ և վատթարաբարոյ քահանայի ուրումն. որ գայթակղութիւն լինէր ժողովրդեանն ոչ միայն յաւուրս կիւրակէից և այլոց տէրունական տօնից ի մարմնաւոր աշխատութիւնս կալով, այլ և զայլս ի նոյն հարկելով։

Ըստ այսմ և մինչ յաւուր պղակերպութեան Տեառն աղայր զցորեան, մերձենայ առ նա Փրկիչն և հարցանէ. ,, զի՞նչ է օրս այս,,. և քահանայն ոչ կարացեալ ճանաչել զնա, ի ձայն բարձր գոչեաց. ,, քեզ զի՞ փոյթ, պղակերպութեան Տեառն է այս օր,,։ Ցայժամ դարձաւ անտի Փրկիչն, և անդէն յականն քթթել ընկղուզաւ յանդունդս տունն և որք կային ի նա. յայնմ օրէ ոչ որ եւս տես զնա կամ ըղնտանիս նորա, և ի տեղւոջն՝ յորում տունն էր, այս լիճ ի յայտ եկն. և հոսեցին աղբիւրք ջերմին ջրոց, որք են արտաստաք օրինաղանց քահանային և ընտանեաց նորա։

Ի մէջ բերեմք և զայլ ինչ աւանդութիւնս, զոր պատմեցին մեզ բնակիչք հրկրիս, այլ մեք անձամբ ոչ գտաք ի տեղւոջն, զորմէ բանդ է ըստորեգեալ։

,, Ի Հարաւակողմն Վրաստանի է Սուրամ անուն աւանն. և ունի զՀինօրեայ ամրոց, որ ասի թէ շինեցաւ ի Փարնաջանայ երկրիւր ամաց նախ քան զՔրիստոս. էր սա յառաջագոյն ընդ տիրապետութեամբ իշխանի միոյ, որ էր գոզջիր անկաս և բազում անգամ վտղովէր զանդորրութիւն թագաւորացն երկրին. ի հարաւային արեւելեան մասին ամրոցին բարձրացեալ կայ պարիսպ ամրաշէն կառուցեալ ի վերայ ահռելի խո-

րոց. մի ի տիրապետող իշխանացն չան ի գործ արար կանգնել զայս պարիսպ կարևոր ի պահպանութիւն տեղւոյն. այլ ամենայն աշխատութիւնն նորա ի զերև ել, զի որչափ հինէր ի տունջեան, յանդունդս ղըրէր ի գիշերի. Եհարց յայնժամ ցկաղարդ ոմն Պարսիկ զպատճառս իրացն, և նա խորհուրդ տայ զնել կենդանւոյն ի ներքոյ հիմանն զմիակ որդի այրի կնոջ տրումն, զի հաստատուն կացցէ շինուածն. ի խնդիր եղեալ գտին վաղվաղակի զմանուկ ոմն և ի վերայ նորա կանգնեցին զպարիսպն, որ միշտ եկաց մնաց խոնաւ ի յորդալուղս արտասուաց անբաղդ մօրն. գոյ և երգ ինչ ժողովրդական, յորում ի մէջ բերեալ է վերջին զոյց մօրն ընդ որդւոյն (զօհրապ). ,, ՈՂՋ ես տակաւին, որդեակ իմ սիրկին,, . —,,ա՛ խ մայր իմ, թաղեցին զիս մինչև ցծունկս ,, . նոյն հարցումն ,,ՈՂՋ ես տակաւին որդեակ իմ,, — ,,ախ մայր իմ ծածկեցին զիս ցկուրծս. — ցպարանոցս ,,. և յետ այնորիկ վերջին շունչ նորա ,,աւաղ մայր իմ, ծածկեցայ խաւար ,, :

Ցանկալի է յայժ ժողովել զաւանդութիւնս կողմանցս, ի համեմատել ընդ Եւրոպացւոց աւանդութեանց։

Լուաք ի ծանօթից մերոց և զեղանակ պատրաստութեան գինւոյ կողմանցս Կովկասու, եղանակ անյարմար և անպէտ, այս ինքն է զի գլուղողն ամենայն խառն ի միասին, սեաւն և սպիտակն, հասունացեալն և խակակուռն ժողովեալ ի մի վայր տորրեն ոտիւք մինչև քամեալ իջանէ գինին ի փոս քառանկիւնի (հնձան) փորեալ և պատրաստեալ յատկապէս ի նոյն գործս, յորոց են մեծ և փոքունք. փոքունք պարունակեն ոչ աւելի քան զտասն սափոր գինի, իսկ մեծք մինչև ՃՀարիւրաւոր սափորս. յորժամ լցեալ լինի հընձանն՝ փակեն զանցս նորա և մնայ մինչև յերկուս կամ ցերիս ամիս. յետ այնորիկ անտի առեալ ընուն յայլ անօթս զարձեալ թաղեալսը ի հող, որոց բերանք մնան բաց. և հող, ջուր, տիղմն, և միջատք անկանին ի գինիս. իսկ յորժամ առնուլ կամին զգինին ի պէտս ինքեանց կամ ի վաճառ, ընուն ի տիկս, որք պատրաստին սովորաբար ի մորթոյ եզին, խոզի, և այծու, զարտաքին երեսն ի ներքս դարձուցեալ, օծանեն նաֆթիւ, յորս գինին առնու առանձին իմն և ազդու ճաշակ. բայց պահպանի անվնաս. Ճիշդ և տակաւ ոչ տեսանին ի նոսա։

Գաղթականք Գերմանացւոց պատրաստեն զգինին ըստ Եւրոպական կերպի. մեծաւ ջանիւք որոշեն նախ զնաղղն ի տեսակս տեսակս, զմիեալ հիւթն ընուն ի կիսատակառ, մղեալ մինչ ցառաջին եռացումն, յետ այնորիկ ընուն ի տակառս. յամենայն տեղիս ի կողմանս կարօտին անօթոց գինւոյ. իսկ Գերմանացի գաղթականք ինքեանք պատրաստեն զամենատեսակ անօթս. գտանին սակաւուք միայն շիշք շամպանեայ գինւոյ, որք բերեալ լինին ի Ռուսիոյ, և վաճառին Հարիւրն 15 Ր. արծ. ուստի և քան զգինին, ծանրագին. զի ապնիւ գինին Կախէթի վաճառի, մի չափին, (զօման) սովորաբար երկք քոփեկ։ Վիրք անհմուտք զոլոմ մշակութեան այգւոյ, առնուն գինի զօ. ի միոյ օրավար գետնոյ եթէ արգասաւոր է հողն, 350 սափոր, եթէ անարգասաւոր է 260. իսկ գաղթականք առ ջանալիս և խնամուտ հսկողութեան իւրեանց, մինչև 600 սափոր, և ևս։ Որթ խաղողոյ տեսէ աստանօր մինչև ցՀարիւր ամս. լաւագոյն գինին Կախէթի գնմանութիւն տայ գինեաց Բուրգոնի և Սպանիոյ. գինի երկրիս մինչև ցայս վայր չէանց ի Ռուսաստան կամ յօտար տեղիս. միայն Վիրք և գաղթականք նոր ի նորոյ սկզբան արարին վաճառել. Հայք ոչ վաճառեն զգինի, և Մահմետականք խորշին ի նմանէ ըստ կրօնականին։

Ի Թիլիս և ի Շղնաղ գաւառս Կախէթիոյ երկուց քաղաքացն Հանդերձ 115 գիւղք և տունք ի նոսա 14 253. յորս են, եկեղեցիք Վրաց՝ 170, Հայոց՝ 12։

Են գետք, որք բաղկանան ի 20 կամ Ո30 տանց, և են որ ի չորս Հարիւրոց։ — Անտի դէմ եղեալ եկաք ի Գուրկան, և ի Գուրկանայ ի Սղնաղ, հիւրընկալեալ ի տան կողմնապետին իշխանին Աբխազեան (Աբխազով), որ էր այր հանճարեղ և սիրող լուսաւորութեան. կին նորա՝ դուստր իշխանին Սվամեթից. ըստ պատմելոյ սորա ոչ մի երկիր ի սահմանս Կովկասու կարէ

այնչափ առաւել մեծակարարիլ Ճանապարհորդին տեղեկութիւնս հնադիտականաց, որպէս Սվասմետ. մանաւանդ հետաքրքրական ճարտարապետական շինուածոցքն, որք վերաբերին ամենայն ժամանակաց։

Պատմութիւնն լուէ թէև ըստ մեծի մասին զկողմանցս Կովկասեան երկրի, այլ անհամար ճարտարապետական շինուածք ցուցանեն զյառաջդիմութիւն, և զլուսաւորութիւն երկրին յարուեստս և ի գիտութիւնս ի հին ժամանակս. և մարթ է ասել թէ սակաւուք միայն պակաս քան զԵւրոպացիան հանդիսանային նոքա ի միջին դարս։ — Անդ են եկեղեցիք բազմաւք, գործք միջին դարուց կիսաւերք. որք ըստ աւանդութեան Աբխազաց և Սվամետաց կառուցան ի Քրիստոսէ. ընդ անուամբն Քրիստոսի, պարտիմք իմանալ զԻեսուացիս, որք ի միջին դարս ըստ ժամին ինչ իշխէին կողմանցն արեւելեան ափանց Սեաւ ծովուն, կամ գէթ ազդեցութիւն նոցա տարածուր ի վերայ երկրին. Թուի թէ Դիւնուացիք գոն գործեալ են տարածել զդաւանութիւն Հռովմէական եկեղեցւոյն ի մէջ հեթանոսաց, որպէս յայտ առնեն շինուածք եկեղեցեաց ըստ ձեւոյ նոցա. ընդ հովանեաւ և պաշտպանութեամբ նոցա Գրանկիսկեան կրօնաւորք դեղան յամենայն կողմանս Կովկասու 49)։ յամի 1833 հաստատեցին զարքեպիսկոպոսութիւն ի Թեանն, և եպիսկոպոսութիւն ի Լուկոկ, և ի Շիլ, և որպէս երևի, չան եղեալ են նաև ի միւսեւին եկեղեցւոյն Վրաց ընդ Պապականին, այլ անօգուտ թէ սոցին և թէ չան այսարիւրքին Վրաց Անտոնիոյ առաջնոյ ի թագաւորութեան Հերակլեայ, որ աքսորեցաւ յամուսոյ պատրիարքութեան սակն այսպիսի դիտաւորութեան. և եթէ կաց այնուհետև յաւանձնութեան տուեալ զանձն յուսմունս և չընթերցմունս։

Ցայտ իսկ է ապաքէն, թէ հնութիւնք Դիւնուացւոց ամբաւս կարեն մատակարարել նիւթս վերաբերեալս ի պատմութիւն և ի տոհմագրութիւն կողմանցն և աշխարհացն Կովկասու, և հիւսիսային ժողովրդոց Ասիոյ. այլ ոմ վայր յանձին կալաւ ի լոյս հանել զայսոսիկ հարստութիւնս պատմականաց։ Ցայսոսիկ կողմանս ամենայն ուրիք են շինութիւնք անհամարք, զորս աւանդութիւն ընակչացն Դիւնուացն տայ. Դիւնուացիք ունէին յարաբերութիւնս ընդ ամենայն սահմանս Խրիմու, Կովկասու, փոքուն Ասիոյ, ի Տրապիզոնէ ցԿերա. և ի խորս Ասիոյ՝ ցԱբաս. նոցա գրեն անհամար դեղակք, կամուրջք և կարաւանոցք. զօ. ամրոցն Հասան-Կալէ, ընդ նմին կամուրջն որ ընդ Եփրատ. իսկ անտի երկու ժամու հեռի գտանի նշանաւոր կամուրջն, Կամուրջ Հովուաց ասացեալ (Հոբան—քեօփրիւ) ի վերայ ետին գնդակաշէն կամարաց. և զայն Դարէհի Վշտասպեայ 50) տան։ Յաղագս Սվամետաց պատմի հետեւեալ աւանդութիւնդ։

Եպան (ասի) ի յարիշտակիլ զսկի գեղմն ի նեղ էարկ զարքայն Վրաց Փառնաւազ. և նա առ ի գերծանիլ ի ձեռաց նորա խոյս ետ գնաց ի Սվամետ, իբրև յանմատչելի և յաներկիւղ տեղի. սակաւաւոր ժողովրդով տեղւոյն հետզհետէ նմա, և նա շինեաց անդանօր ամրոցս բազումս, որոց աւերակք են ցայսօր ժամանակիս, և ի նոսա բնակեցոյց զիշխանս Վրաց, այլ վերջինքս տակաւ առ տակաւ խառնեցան ընդ բնիկ տեղացիս և անհետացան. լերնոյ Սվամետաց միանդամայն առանձին և օտար է յամենայն լերանց Կովկասեան բնակչաց, ըստ բառիցն, ըստ արտասանութեան ևլն. միայն թուական անուանք Վրացերէն են։

Սվամետք են կատուտակն և չիկահեր. քաջք և գեղեցիկք, անարդութիւն կամ վնաս առ սոսա մենամարտութեամբ փոխարինեալ լինի, և արեան վրէժխնդրութիւն գտանի ի նոսա յամենայն ուրիք. բազմակնութիւնն ներելի է, այլ թողուլ զկին կամ կնոջ զայր աննեղելի. գնոյ առնուն զկանայս, բայց բազում անգամ այն է ղի փախուցանեն, ըստ օրում անկարող լինին հատուցանել ըստ դնոյ նոցա 60 և մինչև ան-

(49) Անդիմն է միանգամայն ասել թէ Ֆրանկիսկեան ընկերութիւնն մուտ գործեաց յամենայն ի սահմանս Կովկասու,

(50) Դարեհ որդի Հիստասպեայ կամ Վշտասպեայ, յետ կամբիւսեայ որդւոյ Կիւրոսի թագաւորէ Պարսից. որ կոչեցաւ նաև Արտաշէս Բ։ Սոյն ինքն է որ հատ ի կնութիւն զնօթիոք դուստր հօրեղբօր Մարդքսկի։

գամ 80 կով. վաճառ. տղայոց և աղջկանց սովորական ինչ է ի սոսա. որք տարեկք լինին նախ առ Հերբեզս, ապա ի նոցունց ի Կ. Պօլիս. զին երեսուն միոյ յերկք հարիւր դուրսյ ֆ400 իսկ աղջկանն կէս զին. Սվամեաք որք դարձան ի քրիստոնէութիւն ի ձեռն Թագուհւոյն Վրաց Թամարայ, զերեխ անգամ միայն են քրիստոնեայք, չունին զքահանայս և ոչ եկեղեցական արուեստ. Ժողովին միայն ի մէջ աւերակաց յաղօթս, և սովորաբար առաջի պատկերի, զորս յարգեն. այլ առ ի չգոյէ քահանայից, են առ սոսա ազգ ինչ սրբանուէր պաշտօնէից անուանեալք «Դևկանազ», որք ունին ակնարկութիւն ի վերայ եկեղեցեաց. աղօթս առնեն ի լուր ժողովրդոց յանուն սրբոյ Երրորդութեան, օրհնեն զպատակ ամուսնացեալց, և Թագեն գնեալս. Ժողովուրդ նոցա առնու զերդումն առաջի պատկերաց իւրեանց Դևկանազաց, պահեն և զպահս. Ասի թէ երկիր նոցա անտիկ և անմատչելի է և պատեալ յոյժ, ունի և զբոլս ոսկւոյ, արծաթոյ, այլ ոչ այնչափ յայտնի եղեալ կամ ի կիր առեալք են։

Իշխանն Աբխազով պատմեաց մեզ թէ ամօք ինչ յառաջ տեսեալ է ի սահմանս Ախալցխոյ զեկեղեցի փոքրիկ գեղեցկաշէն և ամբողջ, շինեալ ի Թամարայ Թագուհւոյն, որպէս ցուցանէր արձանագրութիւն նորա. Նոյն այս իշխան պնդէր թէ Փառնաբաս արքայ Վրաց եղիտ զայժմեան եւ կեղեցական տառս նոցա. կամ գէթ ի կիրառութիւն էած զնոսա 170 ամօք յառաջ քան զմեծն Աղէքսանդր, որմէ լեզու Վրաց ստացաւ յարգ յայսոսիկ կողմանս. և եղև կիրառական. Իսկ մինչ ցայն վայր խօսէին ի բազմաձայն լեզուս 51)։

Պատմաբանական ստուգութիւն է արդեօք, թէ աւանդութիւն միայն։

Ցետ ճաշու առնալ սորա տարաւ զիս ի վանս սրբուհւոյն Նունեայ (Նինո-Թումինդայ) կէս ժամ և եթ հեռի ի Մղխախայ. Պատմութիւնն ցուցանէ թէ սուրբն Նունի ի ժամանակս մեծին Կոստանդիանոսի յամի 314 ամէ ֆ318 ամն զառաջինն քարոզեաց զքրիստոնէութիւն ի Վիրս, կառոյց զմիջատակեալ վանս զայս, և Հայստատեաց եկեղեցի. եկեղեցին Վրաց կատարէ զմիջատակ Ս. Նունեայ ի 14 Յունուարի. ի տօնի նորա ասի երդ ինչ յօրինեալ ի պատիւ նորա, որ ի պատմութիւն ակնարկէ եղանելոյ սրբուհւոյն ի Հռոմայ ՝Երուսաղէմ, անտի ի Վիրս ի քարոզութիւն քրիստոնէութեան. աւանդութիւնն ասէ թէ էր սրբուհին Նունի մերձաւոր արենակից մեծ Նահատակին սրբոյն Գէորգայ. ունէր ի ձեռին խաչ յորմոց լաղտոյ կապելոց ընդ միմեանս հիւրվք զմեխոյ նորա, որով մեծաւ ի նշանս առնէր. այս խաչ պահպանիւր զգուշութեամբ ի սերունդս Թագաւորացն Վրաց, իսկ յամի 1720 իբրև խաղացին ի Վիրս տաճիկք, Պարսիկք և Լեղիկք, փոխադրեցաւ ի լերինս յեկեղեցի գեղջն Անավլոյ. անտի ըստեալ զնա մետրապօլիտն Վրաց, առաքեաց ի Մոսկուա որդւոյ արքային իւրեանց Վախթանկայ, Հերակլ արքայ քանիցս յետս պահանջեաց զայն, այլ արքայորդին և տուն նորա յանձն չառին տալ. մինչև յամի 1801 Թոռնորդի Վախթանկայ Գէորգ արքայորդի ընծայեաց կայսեր Ռուսաց Աղէքսանդրի առ աջնոյ. իսկ կայսրն հրամայեաց զարձուցանել ի Վիրս, ուր և պահպանի ի մայր եկեղեցւոջ Մ՝ցխեթու. ըստ այլոց աւանդութեան այս խաչ կապեալ միացեալ էր հիւղովք պլուզ սրբոյ կուսին աստուածամօր Մարիամու, և ի նմանէ ի պարզևի մասին ընկալեալ էր սուրբն Նունեայ։

Ի ձանձրարհորդութեան քաղաքացիս եղեալ կայ պատմութիւն Ս. Նունեայ առեալ ի պատմութենէ արքային Վրաց Վախթանկայ հինգերորդի, յորում երեսք 146 բանք են այսպիսի։ «Ցօրժամ Կաթուղիկոսն ուսուցանէր սրբոյն Նունեայ զքրիստոնէական հաւատն, ասէ ցնա. զուսար իմ, աչօք հոգւոյ տեսանեմ ի քեղ զօրութիւն որպէս զառիւծս՝ որ ահեղ է քան զամենայն կենդանիս, կամ արծուոյ, որ բարձրագոյնն է քան զամենայն թռչունս. որ յերկրի լրբոնս զմարդարիտ երևի փոքրիկ. բայց սրատես գոլով զիտէ ի բարձուստ զաւարս իւր և խոյացեալ իջանէ ի վերայ նորա կատաղաբար»։

(51) Ըստ հաւատոյ բնակից Մհերոյ պատմագրաց զդէպս Վրաց և Աղուանից եգիտ մեզ Մեսրովբ Թարգմանիչն։

Ս. Նունի ըստ օրինակի աղքային Տրդատայ ծածկեցաւ յամբոխէ մարդկան և բնակեցաւ յանապատս. յաւուր միում տեսանէ ի տեսլեան զքահանայ մի բուրվառ ի ձեռին, և ի միջի ծխոյն խնկոց զհոգիս ընկերակցաց իւրոց, զորս կալեալ աղքային Տրդատայ նահատակեալ էր, զի չերկնչին ի վեր կինս ի վեր ընթանային. աղաղակեաց յայնժամ սուրբն Նունէ և ասէ. «Տէր, վասն էր մեացի ես չերկրի ի մէջ թուանաւորաց». եկն առ նա ձայն չերկնից, «և դու յորժամ եկեսցէ ժամանակ փոխանցիս առ Աստուած քոյ. փշաքար մնացուք՝ զաղբ ընչականն զքեզ, գայ ժամանակ զի վարդս բնծայեն անուշաբոյրս. արի և գնա ի հիւսիս, ուր հունձք բազումք են, և մշակք սակաւք».

Այս եկեղեցի սրբոյն Նունեայ՝ կառուցաւ ըստ ասից աւանդութեան ի չորրորդ դարու, ուր ամ փոխին և ոսկերք նորա. արտաքին ձև շինուածեան այսր եկեղեցւոյ միանգամայն տարբեր է ի ձևոց այլևայլեան եկեղեցեաց, որք շինեալք են առհասարակ զնեղութեաւորք, ի խորհրդաւոր միտս. իսկ այս եկեղեցի չունի զնեղեմ. Տեսաք ասդ զմի վարդապետ և զերիս քահանայս. առաջինն սիրով ընկալաւ հած զնեղ ի սենեակ իւր. առանձնական և անաշխատ կեանք սակաւ երբէք տան մարդոյ զբաղցրութիւն բնաւորութեան և զմարդասիրութիւն, որում մեք հանդիպեցաք.

Այս վենաստան հարուստ էր յառաջադոյն և ունէր մինչև 1,200 շինականս, որք ընդ իշխանութեամբ էին վանուցս, իսկ այժմ Սինօղի. և բաժանին ի չորս կարգս, առաջինն վճարէ ումն տուրքն, երկրորդն՝ վեց, երրորդն՝ չորս, և չորրորդն՝ երկուս.

Եկամուտք քահանայից կողմանցս են յանդոց նոցին, իսկ ժողովուրդն վճարէ նոցա ըստ տանց 27 ֆունտ ցորեան, և երկք արբաս տեղական դրամ. բաց անտի՝ վասն քահանայագործութեանց, որպէս մկրտութեան, պսակի, թաղման և նմն. տան որոշեալ կամ խօսեցեալ տուրս ինչ. օրինակի աղագաւ վասն վերջնոցն, առնուն յերկու բուպլէյ 910-ն. Ունին սովորութիւն տալ և նրին Հայկերոյթս. ի պատիւ հանդուցելոյն. մի յաւուր լուացման, մի յետ եօթին, և մի ի տարեդարձին. յորս միշտ կտանին քահանայք. թէ դէպ լինի ծառայ քահանայից դառնալ յայսպիսի ծիսակատարութիւնս՝ առնուն և նոքա պերիս արբասս.

Ասի ի միւսում աւուր դարձեալ զուղին կալաք Տփխիսոյ, ուր կալով աւուրս ինչ ի հոգածութիւն պիտոյից ճանապարհորդութեան ի Հայաստան և կարևոր թղթոց, ի 22-ն Օգոստոսի յերեկոյին պահու ուղղեցաք զընթացս մեր դէպ Երևան, ճառաջ խաղացեալ եկաք ի Քարվանսերայ իջևան բոստի, ուր զմեզ ժամն երկուս արգել և պահեաց վնասեալ սայլական մեր, և ստիպեցաք տալ ի կարկատել. Ճառաջեաւ իջևանին անկանի գիւղ Հայոց. բնակիչք նորա 32 ածք յառաջ գաղթեալ եկին ի Պարսկաստանէ ի ժամանակս կուսակալութեան Ցիցիանով իշխանին. և պարապին երկրագործութեամբ.

Հանդիպեցաւ ինձ աստանօր ծառայող ոմն դատարանին Գանձակայ, որ ետ ինձ տեղեկութիւնս զկողմանցն այնոցիկ. և ես ի մէջ բերեմ այստանօր. — Բնակիչք գաւառին Գանձակայ են Հայք և Թաթարք. Հայք բնակին ի գերինս և Թուղքք յարգաւանդ տեղիս դաշտաց. առաջինքն պարապին գլխաւորապէս երկրագործութեամբ և այգեգործութեամբ. սերմանեն ցորեան, գարի, կորեակ, եգիպտացորեան, և վուշ. վերջինքն՝ տուարածութեամբ՝ որք և մեծաւ մասամբ հարուստք են, այլ ծոյլք. իսկ Հայք ընդհակառակն յոյժ աշխատասէրք. գիւղորայք թուրքաց բաղմաբնակք են, իսկ Հայոցն սակաւատունք. տունք առաջնոցն՝ նմանին տանց Վրաստոյ, երևի դի ազգ մի ի միոցն իցէ՝ առեալ զձև շինութեանն. զայսպիսի տունս մարթ է անուանել ստորերկրեայ այրս.

Ցարքունի գիւղս, հողն սեպհականութիւն է տէրութեան, իսկ շինուածք, ծառաստան և այգիք՝ բնակչաց. իւրաքանչիւր տան որոշեալ է բաժին հողոյ. և տիրապետողք նոցին կարեն գնել կամ փոխել միայն ի մէջ համաշխինցն իւրեանց, և եթէ անդամք միոյ գերդաստանի Մահմետականաց կամիցին, կարեն բաժանել զկալուածս իւրեանց այլ ի ձեռն Ճարիաթ-շերի, (հոգևոր դատարան Մահմետականաց). որոյ առնապետն առ Սուննիս Ղազի անուանի, առ Շիայս՝ Ախունդ Ցիսոն գիւղից է միայն մի Ախունդ. Ճարիաթ-շերն բա-

ժանէ զինչ կամ զկալաւածս Համձայն արգա-
րութեան, իբր զի աշխատաւորն ի նոսա առնու
զտուն, այլ զմահ հողոյ կամ խաչինս կամ
զրամ. հայրն կամ եղբայրն առ սոսա վաճառէ
զաղջկնն տան, (այս ինքն յամուսնացուցանելն
առնու ի փեսայէն գումար ինչ, կամ խաչինս,
օթոցս, և այլ իրս). եթէ հայրն չունի արու զա-
ւակունս, զտերքը ժառանգն ինա. եթէ հայրն
բաժանեսցի յորդւոց, յետ մահու նորա զուստրն
առնու զժառանգութիւնն, իսկ թէ անբաժանք
իցեն՝ առնու բաժին միայն ի շարժական գոյից.
իսկ անշարժք ուստերացն են։ Եւ Թաթարս են
աղնուական ցեղք անուամբ Ռէկ. զրեա թէ յիւ-
րաքանչիւրում՝ աւան գտանին տունք բնկաց. սո-
ցա էր գործ յառաջ գտել զժողովուրդն, ժո-
ղովել զարբունի հարկ, և. և ժողովուրդն պար-
տաւոր էր մի մի աւուրըք ծառայել նոցա ձրի, ի
հնկել զերկիր նոցա, ի հնձել և կասել։ Ի 1841
ամէ հետէ կարգեցան ի գիւղօրայս գլխաւորք
(քեխոստա) և օգնական նոցին յերկուց մինչև
ցհինգ համրա կամ ազգագկալ. վերջինքն յա-
ռաջ ընդ իշխանութեամբ էին առաջնոց, իսկ
այժմ անկաս ի նոցունց իշխանութենէն, բայց և
բնկք ազատք ի նոցանէ։

Հայոց աղնուական տոհմք են մեկիք. չունին սո-
քա ամենևին արտօնութիւնս. չառնուն հոշակ
ոչ յարքունուստ, և ոչ ի ժողովրդոց, միայն ա-
զատք են ի հարկաց, որպէս և բնկք իսկ. որ ինչ
վերաբերի ի ներքին կառավարութիւն Հայոց տեղ-
ւոյս, իմս գնայն, զոր ասացաք ի վեր անդր
գԹուրքաց։ Հայք և Թաթարք գործն շալս և
օթոցս։

Անտի ի Քարվանսարայէ հասեալ զուգի հա-
սաք ի լիճն անուանեալ «Գեօք չայ» (Կապոյտ
գետ, ծով), որոյ շրջապատն է չորից աւուրց ճա-
նապարհ. ի մէջ լճիս է կառուցեալ մենաստանն
Հայոց Սևանավանք կոչեցեալ. յորում լինակին՝
արքեպիսկոպոս Հայոց և քան միանձունք, որք
ոչ Հպատակին Կաթողիկոսին Էջմիածնի 52)։
Եւ լճաւս որպէս յիշէ Դիւբուա, գոյ եկեղեցի՝

(52) Ասէ՝ առեալ կարգէ արգոյ հեղինակն զայս ինքնիշ-
խանութիւն մհանձանց Սևանոյ, մեզ չէ յայտ։

վայելչակերտ՝ շինուած մեռատաններորդ դարու, ի
վերայ գրան նորա գտանի այսպիսի արձանագրու-
թիւն «ի 1033 ամի ի Թագաւորութեան Սաղի-
կայ և ի պատրիարգութեան Սարգսի, ես Գրիգոր
Մագիստրոս որդի Հասանայ շինեցի զայս եկեղեցի
բարեխոս վասն իմ, վասն մօրն իմոյ և որդւոյս.
աղաչեմ զամենեսին, որք ընթեռնուն զսա, աղո-
թիկ առ Փրկիչն վասն մեղուցեալս»։

Ամենայն արևելեան եկեղեցիք համձայն վար-
դապետութեան Հաւատոյ Հայոց բաղխաստութիւն սրբոյ Հոգւոյն Աստուածածնին և սրբոց,
որպէս վասն կենդանեաց, նոյնպէս և վասն մեռե-
լոց ի քաւարանի 53). և այս յայտնի տեսանի
յանհամար արձանագրութեանց եկեղեցեաց և
մատարձանաց Վրաց և Հայոց. բաց աստի ի վե-
րոյիշեալ արձանագրութենէն տեսանի թէ և Աս-
տուածահաճոյ գործք, ընկալեալք են ի սոսա իբ-
րև միջոցք քաւութեան մեղաց. զո. են շինու-
թիւնք եկեղեցեաց և։

Պատրաս նկ, զիտակ ամենայն աւանդութեանց
երկրին, ի տեսանել պղիճն Սևանայ պատմեաց
ինձ զհետագայդ աւանդութիւն ի վերայ Ադանկ-
թամուրայ։

Թամեր կամ Թամուր ի մանկութենէն էր հո-
վիւ խաշանց. դեպ եղև երևիլ ի մէջ հօտին նա-
պաստակի միոյ. Թամուր զառն կարծելով զայն՝
յորժամ կամէր փախչել, զառաջս կալեալ միշտ
ընդ խաշանցն բերէր մուծանէր ի փարախն. յա-
ւուր միում տրտունջ եբարձ հօրն զանպատրաստ քնա-
ւորութենէ զառին, որոյ գիտացեալ զինչ է այն,
և զարմացեալ ընդ արագավազութիւն որդւոյն
իւրոյ, ասէ. «Թէ կանուխ Թէ անագան ընդ բը-
նաւմն նուաճելոց ես դու զաշխարհ և կործանե-
լոց զուխտ կրօնաւորաց. այլ որպէս զի մի զբո-
վանդակ երկրագունդն ունիցիս քեզ և յաւեր
զամենայն տեղիս դարձուցանես, բառնամ ի քէն
զարագընթացութիւնդ», և եհատ զջլել միոյ ոտին

(53) Եկեղեցի Հայոց սմենևին չխոստովանի և չընդունէ
զքաւարան. մեք չկամիմք աստանօր երկարել զբանս մեր
վասն այդ, իսկ Թէ ընթերցող, դու ցանկասցես, առաջի առ-
նեմք քեզ զկրս աստուածաբան հարց և հոգեբաշխ վարդա-
պետաց եկեղեցւոյ մերոյ սրբոյ։

նորա, յայնմ օրէ կաղացաւ մանուկն, որ վասն կոչեցաւ Լանկ-Թամուր. (կաղ Թամուր) Բայց իբրև աճեաց և զօրացաւ, ստացաւ արիութիւն քաջութեան և սիրտ անվեհեր. սկաց գլուխ ցեղին իւրոյ և ետ ի մտի զբռնամբ ածել զաշխարհ, ուստի առեալ 12,000 անձինս խաղաց գնաց ի վերայ Թադաւորին Շինաց, որ բնակէր ի մէջ առ բոցի միոյ, կղզիացելոյ ի ծովուն. Սմա յիւրաքանչիւրում աւուր բերէին խորտիկս յոսկի ափսէս, և յետ կերակրոյն զափսէսն ի ծով ընկենուին յամենայն աւուր. պատահեալ ղղալստ Թամուրայ՝ հրամայեաց հաւաքել յամենայն տեղեաց տէրութեան իւրոյ, 12,000 կաղ ձիս, առաքեաց ընդ դէմ նորա, ընդ նմին և ոսկի ափսէ ծածկեալ, ի ցուցեալ զիւրում անեծահման ճոխութեան և մեծութեան իւրոյ. իբրև եղաց Թամուր զափսէն, եկիտ լցեալ ակամբք և ոսկւով. յայնժամ ասէ ցարսն. «ասացէք ցթագաւորն, ես նօթի եմ՝, և ինքն ինձ յղէ ոսկի և քարինս,,. և թագաւորն ասէ «ընդէր եկիր. ունէիր զի՞նչ ուտել ի տան քումմ, ապա ուրեմն կարօտ ես ոսկւոյ և քարանց. առ առանիկ, որչափ կամիս,,. Թամուր յետս դարձաւ, և անցեալ ընդ Պարսս եկն ի Հայաստան. և իբրև մեծ թշնամի քրիստոնէութեան ետ ի մտի երթալ, աւերել, կործանել ղեկեղեցիս և զվանորայս. զիմէ դնայ ի Վեղարշավանք. այլ հասեալ յեղը գետոյն տեսանէ ի միւսում կողմանն զօրս անթիւ բազմութեամբ, զորս ինքն միայն նկատեալ դուցանէ զօրաց իւրոց, և զնացեալ թէ երկինք ընդ դէմ զիմեն նմա՝ ազաղակեաց, եղ ֆէչ (երթի ի բաց). ուստի մնաց անուն վանիցն ի Թաթարաց Եօլ — զէչ։ Դարձ արարեալ անտի դիմեաց ի վերայ Սեւանայ վանից, և զստանօր տեսեալ կրօնաւորս սմին՝ որոյ ազեկալ զիւրկն ի վերայ ջուրց զնայր անվտանգ, պահեաւ ի հրաշիցն, և կոչեալ առ ինքն զնա պատուիրեաց օրհնել զզօրս իւր՝ և ասէ. «լինիցիս դու զի՞նչ և կամիս, լուայց քեզ,,. յայնժամ կրօնաւորն խնդրեաց զի որչափ գերիք զտանելոցն ի փոքրիկ առագաստ վանիցն արձակեալ լցին. էին ի մէջ օրացոյ նորա անհատար գերիք և ամենեքին զետեղեցան ի տաճարին, վասն որոյ ազատս կացոյց զնոսա. իսկ կրօնաւորն փոխանակ օրհնութեան գրեաց և ետ նմա անէծս զի մի առաւել քան զամն այր հնազանդեցին և կացցեն ընդ ձեռամբ նորա. և յայնմ օրէ ցրուեցան զօրք Լանկթամուրայ։ Ի նմանէ յառաջ եկեալ են և Լենկքիք, յորս չէ մարթ բնաւ տեսանել առաւել քան զամն այր թէ միաբանեցին և իցեն ընդ միոյ իշխանութեամբ (54)։

Փոքր առ փոքր յառաջ խաղացեալ եղանէ մարդ ի բարձրութիւնս վերանց. և քանի մի ժամու ճանապարհաւ հետացեալ ի Սևանայ տեսանէ զգաղթ Արարատայ զարդարեալ ի նշուլից չքնաղ արփւոյն։ Ա յրարատ ունի 16,000 ոտնաչափ բարձրութիւն յերեսաց ծովուն, ուստի և բարձր քան զամենայն լերինս դորս ես տեսի։ Էլբորուս քանի մի հազար ոտնաչափ բարձր է թէև, այլ ըստ որում ի շրթայից Կովկասեան լերանց ձևանայ, ոչ այնչափ զարմանալի. իսկ Ա յրարատ առանձնացեալ մեկուսացեալ ի մէջ ընդարձակ դաշտի, և սպիտակափայլ յարատև ալեօքն պանծալի, ազդէ ի մեզ յարգութիւն և ահաւորութիւն։ Ա նդուլութիւնք աղգաց համաձայնին յընդունել նորա ի գլուխ իւր զՆոյեանն տապան *)։

Յետ քանի մի ժամու մուտ կալաք Երևան, իջևան կալեալ ի տան Պ. Արծրուհւոյ, որ էր կառավարիչ (տիրկբտոր) նորահաստատ արքունի գործոցին։ Երևան է միանգամայն Ասիական քաղաք՝ թէև քանի մի արքունի նորաշէն տունք են ըստ Եւրոպական ախորժի։ Երիվանն, կամ որ ուղիղն

---

(54) Մի՛ գուցէ ընդ նոյն օրինակ ունթ՛իք են՝ աբկհալ է ազգ մեր, զի կարօտ մնացաք տեսանել գանէ հինէ կամ վեց անձին ի մի միաբանիլ յազգագուտ և յընդհանրական խորհուրդս բանս և ի գործս, որով և ոչ այսպիսւոյ վնասակար արտաքսուելի դրութեան։

(*) Մեծ պատմութեան Հայոց Մովսէս Խորենացի անուանէ զԱրարատ ի մէջ աշխարհս և որպէս և Հայաստանի երկրին. Բերդերը հատ. ծ. յառաջ բերէ զբանս Բասմերայ և Գոպեայ, որք հաստատեն թէ ոչ գրաբեւ Արարատ ունի զվերդրնական ի հինն աշխարհի դիտս. նաև զի կնդրոն է մեծի տարածութեանն որ ի տրամադրանին Բարեյեսոյ ցնիզուցն Պեհրինկոյ. Բ. գրութեան Աստա — Ափրիկեան անապատաց. Գ. զուգահեռաւոր ընթացից մրկնկրկական ջուրց և ձիզարդարոյ ցլիճն Բայքալ և Դ. գան զայլ երկիս առաւել յարմարագոյն

է Երևան, ի Հայ լեզու նշանակէ տեսանին։ Ա-ռանգուէթիւնն ասէ թէ՝ յորժամ նոյ չոտ ջրհեղեղն ի լեռնէն Հայեցաւ տեսանել ղգամաք, և-տես զայս տեղի և աղաղակեաց «Երևի»։ և առ-մի տեղիս էառ զայս անուն*)։ Ըստ այլոց աւան-գուէթեան՝ Երուանդ արքայ Հայոց հիմնեաց զայս քաղաք։ Երևան ունի և զայլ անուանս, որպէս Անց—Վաղին. Շաղաթ. Դվին, Արմավիր. և Ար-տակատոյ 55)։ Ասա Հանդիսիցաւ Անհրաժ Տիգ-րանայ։

Ջօրն ողջոյն զառաջինն, անցուցի շրջելով ի քաղաքին Հնոսաքրքրական քան զամենայն ինչ է վաճառանոցն. ուր ամենայն արհեստաւորք աշ-խատեն ի կրպակս և զանազան իրաց վաճառողք բնակին ի միասին. զրեթէ իւրաքանչիւր ոք ի նո-ցանէ ունէր ի ձեռին կիրճ բազէ մի, որով ան-ցուցանէր ժամանակս իւր։ Յարևելեան քաղաքս կեղրոն հաղորդակցութեան միմեանց և ընկերա-կան կենցաղավարութեան են վաճառանոցք. զի ի տունս ժողովել և ժամանակս անցուցանել յայն-ժամ է միայն, յորժամ լինին ուրախութիւնք, զոր օրինակ հարսանեաց և այլն։ Ընկերակցու-թեամբ Արովեանի և քաղաքապետին դիտեցի ա-ուտակս և եղանակս ուրդանելոյ զերկիր. թէև ցաւիմք, զի կարճ միջոցս կացեալ յայսոսիկ կող-մանս, չկարացի որպէս կամ էր ինձ քննել և դի-տել զայս երևելի առարկայ։ Երես գաշտիս երկայ-նակի ընդ մէջ Արարատայ և լերանցն անկիլոյ ի հիւսիս ծածկեալ է լավայիւ, սևակճիւ, և տեսակ ինչ քարամբք, և ամենեքեան սոքա հետք են հրա-ըղևսաց. ի հրաբղխային ջերուէթենէ է, զի անաւ հող երկրիս է ջերմ, ջոր, յայց ըստ ինքեան յոյժ արգասաւոր, եթէ ուրդանին զնոսա. առանց ջրոյ և ոչինչ բուսանի ի նմա, զի ամօք չտեսանի անձ-րև, յորմէ յառաջ գայ տօթ անտանելի և չո-րութիւն երկրի. և երկիրս այս, դիւրաւ կարէր ան-մարդանալ, եթէ չլինէին առուք և ջրանցք. որք երևին յառաջ եկեալք յամենահին ժամանակաց անտի յաւուրս ինքնակալութեանց մեծամեծաց արևմտեան Ասիոյ. զի թէպէտ պատմութիւնն լուէ, այլ եթէ ի նկատի կալցուք թէ այս երկիր, բացառութեամբ քանի մի կողմանց, առանց ուրդ-ման չկարէ մատակարարել բնակչաց սնունդս, և որպէս պատմութիւնն յայտ առնէ երկու կամ երիք հազար ամօք յառաջ այս երկիր տասնապատ-ւիկ առաւել բազմամարդ և բարգաւաճ էր քան

*) Յամենայն ուրեք յայսոսիկ կողմանս բանք են ղնոյե. Պաբսիկք անուանեն զԱրարատ «Կուղի - Նուհ» (լեառն Նոյի). Հայք, Մասիս, այս ինքն մայր աշխարհի, երկիր, որ առ Արև-ելեան սահիք լերինն աթ Անդնոյեան. վասն զի ասա գա-ւաչինն մխեցան յերկիր ոտք նորա. գիշեր, Ակուռ, այս ինքն Արկ - ուռ, ուր անկեալ զորթ խաղողոյ, զերեքեան ընդ իւր յառաջնոյ աշխարհին. ասանդի թէ որթք խաղողոյ տեսանին մինչ ցարդ, բայց ոչ բերեն պտուղ սակս անօրինութեան մարդկան. և ի տեղւոջ, ուր սեղանն էր Նոյի, հիմնեալ է և-կեղեցի. քաղաքն Նախիջևան, նշանակէ տեղի առաջին իջև-նելոյն Նոյի. Փլոքիանոս Յովսէփ անուանէ զնա Աբազատորիուտ, Մարանդ, մայր - անդ. այս ինքն կին Նոյի։

Բայբերդ ճանապարհորդն 1253 ամի գնէ թէ, ոչ օք կարէ եղանել ի գլուխ Մասեաց. և Յակովբ Մծբնայ Հայրապետն յետ պատարագին ևնդրեաւծոյն չկարացեալ ևլանել, ևառ մասն ինչ տապանին, որ պահպանի յարդանօք ընդ մատունս սրբոց. զևլա-նելն Պարբռաայ ի գլուխ Մասեաց ևրկրեաւդ մասն Հայոց սուտ վարկանէ, իսկ ևսահակեանք ի նոցանէ ասեն, թէ հաւա-նական է ևլանելն, բայց ոչ եկաց նա ի գլուխ լերին, այլ ի վերայ ձեռանն և սահին, հեռի ի տապանէն։

Հեղինակն

(55) Զայսպիսի անուանս ուսումնասիրութեաց հեղինակն երե-ւանայ, չէ յայտ. զոյս միայն մնայ մեզ ասել թէ ուսեալ եւ-րոպացին այնքան անգիտացաւ, մինչ զի զանուանքս Դվին, և Արմավիր, և Արտաքսատայ (զոր կարդաս վերչին երկուքս, Արմաւիր, և Արտաշատ) չգիտ մայրաքաղաքաց Հայոց, տար-կաւ ընծայէ Երևանայ, ընդ նոսին և անունս Շաղաթ որ է գիւղ ինչ աշխարհին Սիւնեաց, իսկ Անց - Վաղէն անծանօթ առ ոչ ոք է. ուստի և գիտնարանաբար ասել ինչ։

այժմ, ուրեմն չկարէին առանց ջրանցից և առուաց մշակել զերկիր, իսկ ի հաստատել և ի զբօսս տանել զայսչափ բազմաթիւ ջրանցս և առուս, պահանջէին ընդ երկար համբերութիւն, և մեծաշոյր իշխանութիւն *)։

(Շարունակելի)

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԵԴՐԱԿԵԱՆ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԿԶԲՆՄԿՈՆ ԲՈՑՈՏՐՈՒԹԻՒՆ ՔՍՈՒՔԹԵԱՆ ԵՐԵՒՈՑՔՆԵՔԵԼ

(Շարունակութիւն)

Ի

ՉԳՈՂԵՆԻՆ.

Մինչ իսկանից երկու դնօտակ շինենք և ձգենք ջրով լիքը ամանի մէջ։ Նոցա շարժելու ժամանակ մենք երկու երևոյթ կը տեսանենք։ Առաջին երևոյթը կը լինի հեռանալը։ Երբ որ սկսենք դնօտակներից մէկը շարժել, միւս դնօտակն մօտիկ տեղից, մենք կը տեսնենք որ այս վերջին դնօտակը, կսկսի լողալ առաջինի ետևից։ Իսկ եթէ երկոքին դնօտակները մօտեցնենք միմեանց և իսկոյն յետ քաշենք ձեռքներս, նոքա իսկոյն կը միանան միմեանց հետ և կսկսեն միասին լողալ։ Երկրորդ երևոյթը այն է, որ դնօտակները փոքր առ փոքր կսկսեն մօտենալ ամանի կողքերին։

Եթէ ջրով լիքը բաժակի մէջ ձգենք մի կտոր շաքար, ջրի երեսին կերևին օդի պղպջակներ։ Այդ պղպջակները կը ձգտին միանալ միմեանց հետ։ Եւ նոքա բոլորեքեան կսկսին շարժիլ դէպի բաժակի որմունքը, և երբ որ փոքր ինչ մօտենան, այն տեղից աւելի արագութեամբ կը կըպչին բաժակի որմերին։

Այս երկու օրինակից մենք տեսնում ենք, որ մի քաշող զօրութիւն կայ ևնա է, որ հարկադրում է դնօտակներին և բշտիկներին մօտենալ միմեանց։ Այդ զօրութիւնը անուանվում է ՅԷՈՂՈՆԻ։

Ասպա ինչու համար երկրի երեսին չենք տեսնում այսպիսի ձգողութիւն, ինչպէս վերևը բերուած փորձերի մէջ տեսնում ենք։ Դորա պատճառն այն է, որ երկրի մակերևոյթի անհարթութիւնը արգելում է մարմիններին միմեանցից մօտենալու։ Այս մի և նոյն պատճառն է նոյնպէս արգելք լինում ձգողութեանը, եթէ մարմինները գտնվում են սենեակի կամ դորա նման մի այլ բանի վերայ։

Որքան որ մարմինը մեծ լինի, նա այնքան աւելի ձգողութիւն կունենայ։ Այդ հասկանալի է։ Երկու հաւասարաչափ անկէ գնօտակները հաւասարաչափ ձգողութիւն են ցոյց տալիս դէպի միմեանց։ Բայց եթէ մէկը միւսից մեծ է, բնականաբար այդ մեծը աւելի շուտ կը քաշէ փոքրին դէպի ինքը, պատճառ նորա մէջ շատ մասներ կան, որոնցից ամէն մէկը երևցնում է ձգողութիւն։ Այսպէս, օրինակ, երբ որ քարը շպրտում ենք դէպ ի վեր, նա ինչու է վայր ընկնում երկրի վերայ։ Փայտը, թուղթը և բմբուլը նոյնպէս վայր են ընկնում, եթէ մի այլ բան չի բռնում նո-

(*) Շատ, որ ճանապարհորդեաց ի Հայաստան Թուրքիոյ, տեսա մեծ ջրանց չինեալ համակ ի վէմերէ քարանց, ուստի ջուր ածէին ի վան քաղաք. ժողովրդական ուանդութիւնն շատ երամայ տայր դոյն։

Խմբագիրն։

բանց։ Ինչու՞ համար դոքա դէպ ի վեր չեն թռչում, այլ անպատճառ դէպ ի ցած են պալես և ընկնում երկրի վերայ։

Երկրագունտը չափազանց մեծ է. ամենամեծ շինութիւնները երկրի հետ համեմատելով աւելի փոքր են նորանից, քան թէ ամենափոքրիկ աւազակը այդ շինութիւններից։ Ես յս իսկ պատճառով երկիրը ցոյց է տալիս ահագին ձգողութիւն։ Նթէ երկիրը չը քարշէր չը ձգէր դէպի ինքը բոլոր մարմինները, մեր վերև շարքատած բանները կկրթային անդարձ, և կանդ կառնէին միայն այն ժամանակ, երբ որ մի այլ բան կարգելէր նոցա շարժողութիւնը։ Թէպէտ և երկիրը գունակ ձև ունի, բայց չափազանց մեծ ձգողութիւն ունենալով, իւր վերայ եղած բոլոր մարմինները պահում է իւր վերայ և նոքա չեն ընկնում մէնաղբրի մէջ։ Առաստաղի վերայ ժողովւում է շատ թոզ, այս ինքն այլ և այլ բաներէն փշրունքներ, փոշիներ։ Ես յդ թոզը նստում է առաստաղի վերայ և մընում այն տեղ նորանից կցուած, պատճառ՝ առաստաղը հաւասարելով այդ փոշիների հետ, խնայ մեծ մարմին է, որ երկիրն իւր ձգողութիւնն էլ մեծ է և այդ պատճառով նա քարշում է դէպի ինքը այն փշրունքները, որոնք օդի մէջ պարւում են իւր մօտերքումը։ Բայց եթէ առաստաղի մի որ և իցէ տեղումը խիստ շատ թոզ կը նստի, նա կախի աւելի ծանրանալ, այդ միջոցին առաստաղի ձգողական զօրութիւնը չի կարող յաղթել նրան. ուստի և այդ փոշիների ղանդուածը վայր կընկնի յատակի վերայ։

Ձգողութիւնը մենք կարող ենք նկատել և հետևեալ երևոյթների մէջ։ Մի-մեանցից մօտիկ եղած մարդի երկու կաթիլները միաւորելով մի կաթիլ են կազմում։ Նաւի տերևները թափուելով ձնակի վերայ, ժողովւում են նորա ափում։

ԻԸ.

պնդու-ն-ն, տաւյգական-ն-ն.

Մենք տեսանք, որ պինդ մարմինների մասունքները պահպանում են քայքայվելուց իրանց մէջ եղած կցման զօրութեամբը։ Ուրեմն կցումն էս ձգողութիւն է։ Միայն այդ ձգողութիւնը գտնվում է մի և նոյն մարմնի անհատների մէջ, որոնք միմեանցից անչափ փոքր տարածութեամբ են հեռացած։ Մարմնի անհատների շատ կամ սակաւ ձգողութիւնից կախուում ունի նորա պնդութիւնը։

Թէ որ մետաղների մէջ աւելի շատ կըցում կայ, ուրեմն և աւելի պնդութիւն, այդ իմանալու համար հետևեալ կերպով են փորձ անում։ Զանազան մետաղներից բայց միահաւասար երկայնութեան և հաստութեան ձիպոտներ են պատրաստում, դոցա ծայրերից մէկը ամրացնում են, օրինակի համար՝ առաստաղի վերայ, այնպէս որ՝ վարի ծայրը ուղիղ յատակին նայէ, այս ինքն ուղղահայեաց լինի, Ես յս կերպ ամրացնելուց յետոյ, վարի ծայրից կախ են տալիս աւելի և աւելի ծանրութիւն (օրինակ ասենք կշռաքար)՝ մինչև որ ձիպոտը չը կարողանայ տանել այդ ծանրութիւնը և կտրուի։ Որանով ահա կարողացել են իմանալ, թէ որ մետաղը ինչքան ամրութիւն ունի, և գտել են, որ պողովատի ձիպոտը պինդ է երկաթի ձիպոտից, երկաթինը՝ պղնձից, պղնձինը

արծաթից, արծաթինը՝ ոսկուց, ոսկունը՝ կապարից: Նրանց այս վորձը և տեսակ տեսակ փայտերի վերայ անունք, կարող ունք իմանալ, թե որը որից ասելի դիմացկուն է: Պարաններից նոքա են ասելի պինդ, որոնց թելերը ասելի բարակ են, և որոնք ասելի քիչ են ոլորուած, պատճառ, որքան շատ են ոլորվում, այնքան շատ են ձգվում, և այնքան թելերի մէջ եղած կցումը պակասում է: Վործուած պարաններըը ասելի պինդ են լինում, քան թէ ոլորածները: Նոքանց և ձիթած պարաններըը չորերից թույլ են, սպիտակացրածները թույլ են չը սպիտակացրածներից:

Մարմնի պինդութիւնը կարելի է ստուգացնել զանազան հնարքներով: Արծաթից և ոսկուց շինած բաներին ասելի պինդութիւն տալու համար նոցա մէջ պղինձ են խառնում: Ձիթը քսուած պարաններըը ասելի պինդ են լինում քան թէ չը քսուածները: Վերձանին, կար անելու ժամանակ, մեղրամոմ են քսում:

Երբ որ մի կտոր փայտը կոտրում ենք, և յետոյ կոտրուած ծայրերը միմեանց վերայ ունք դնում, ինչպես առաջ եղել էր, այդ ծայրերը չեն կպչում մէկ մէկուց, առաջուան պէս չեն միաւորվում: Բայց եթէ այդ կոտրուած ծայրերին հեղուկ մարմին թափունք և յետոյ ծայր ծայրի դնունք, նոքա կատանան իրանց առաջուան դրութիւնը, այս ինքն կը միաւորուին, կամ բողջանան, պատճառ՝ հեղուկը կը լցուի նոցա ծակոտիքներին մէջ և այդպէսով կը շատացնէ նոցա մէջ կցումը: Եթէ երկու թելերի թուղթ ջրով թրջունք, նոքա ասելի պինդ կը կպչեն միմեանցից, քան եթէ չուղ կամ ձէթ քսունք: Բայց երբ որ հեղուկը ընդունակութիւն ունի ու առ ժամանակից յետոյ չորանալու, այնպանալու, դորանով ասելի կամ կը շատացնէ կցումն մասունքների մէջ: Ահա այս օրէնքի վերայ է հիմնուած նամակների ղմուռով կնքելը, սոսնձի գործածութիւնը, մետաղների զոդելը (լհմելը):

Վերցնենք երկու պինդ մարմին, մէկը քար և միւսը դեռ լաւ չը չորացրած կաւէ դնաման: Կաւէ դնամակը կարելի է ձգնշել մատներով: Դնամակը կը տափականայ, պատճառ՝ կաւի մասունքների մէջ եղած կցումը շատ թոյլ է: Դորա համար մենք այսում ենք կաւէ դնամակը կախ-ուկ: Բայց որքան կամիս սեմրը մատներովք քարին, նրան չես կարող ձնշել, տափակացնել, նա միշտ կը մնայ այնպէս, ինչպէս որ կայ, դորա համար մենք կասունք քարը կարծր է, պինդ է: Նա այդին գիսպուածոյի մասունքների կցումը թոյլ է, իսկ երկարդումը շատ սահուն է:

Վերցնենք մի փայտէ գաւազան: Դոլան կարող ենք թեքել դէպի ամեն կողմ: Երբ որ դադարացնենք թեքելը, նա դարձեալ կը շտկուի, վերնայն կընդունի իւր առաջուան ուղիղ դրութիւնը: Ահաւասիկ ուժը, որան կարող ես ձգել ինչպէս կամիս, նա դարձեալ կընդունէ իւր առաջուան դրութիւնը: Այս տեսակ մարմիններըը, որոնք ձգուելուց, թեքուելուց, սեմուելուց, ձնշուելուց յետոյ ձգտում են դարձեալ իրանց առաջուան դրութիւնըն առնալ, ասւում են առաձգական մարմիններ:

Այդ ձգենք մեանին մէկ ուղղութեամբ, նա վեր կցատկի իսկոյն: Գնդակը

գեանին զարկուելիս կը ձնշուի իւր զարկուած տեղիցը: Բայց առաձգական լինելով նա պիտի աշխատի առանալ իւր առաջուան դրութիւնը: Այդ միջոցին ուղղենի անհատները չեռ կը հրուին գետնիցը, և գնտակը վեր կը ցատկի: Գնտակը որքան ուժով զարկենք գետնին, այնքան նա կաշխատի շուտով ընդունելու իւր առաջուան գնտաձև դրութիւնը և այնքան աւելի կը ցատկի դէպ ի վեր: Սորա հակառակ, թոյլ կաւից շինած գնտակը, եթէ զարկենք գետնին, նա կը ամփակի իսկոյն, բայց վեր չի ցատկիր: Այս տեղ մասունքներուն իրարու հետ ունեցած կցումը չափազանց թոյլ է, այնպէս որ կաւը լինչ դրութիւն կամիս կընդունի, և նորա մասունքները չեն ձգտիր վերստին ընդունելու իրանց առաջուան դրութիւնը:

Եթէ առաձգական մարմինները երկար ժամանակ են մնում թեքուած դրութեան մէջ, նորա բոլորովին ընդունում են այն դրութիւնը, որ բռնութեամբ տալիս են նորանց: Այսպէս երկար ժամանակ ձգուած պարաններըը և ճոպաններըը պահպանում են իրանց ձգուած երկայնութիւնը: Եթէ փայտը երկար ժամանակ թեքած պահում են, նա վերջապէս ընդունում է խոտոր ձև: Այս դիտողութիւնից մասունքները յաճախակի թեքուելուց, այնպէս հետանում են միմեանցից, որ նոցա մէջ եղած կցումը թուլանում է և նորա այլ եւս չեն կարողանում ընդունել իրանց առաջուան դրութիւնը:

Ա՛իպատը կը կոտրուի, եթէ սաստիկ թեքուի, պատճառ՝ այդ ժամանակ թեքուելու ուժը աւելի կը լինի, քան թէ մասունքների մէջ եղած կցման ուժը: Թեքուած տեղի մասունքները այնքան կը հետանան միմեանցից, որ կցումն էլ չի կարող նոցա պահպանել իրանց առաջուան դրութեան մէջ:

Մարմինների առաձգականութիւնը շատ հարկաւոր է մարդոց համար: Մարդոց հագուստները պէտք է առաձգական լինին, եթէ ոչ՝ նա չի կարող շարժել ոչ ձեռքը, ոչ ոտքը, միով բանիւ չի կարող շարժիլ լինքը: Կոտրուող մարմինը մի տեղից միւս տեղ տանելիս, նորան փաթաթում են, բամբակով, ծղնոտով, յատդով, խոտով, թղթով, կամ այլ այսպիսի բաներով, որ չը կոտրուին ճանապարհին, երբ որ սայլը քարքարուտ տեղերով գնալիս լեղեկացնում է իւր մէջ եղած բաները: Պարանների առաձգականութիւնից ունի կախումն և լարախաղացների ճարպիկ ու թեթև ոտիւնները:

ԻԲ.

Պլը-նո-ըի-ն, Մագիանո-ըի-ն.

Ամենին ծանօթ է կշռորդը, որով կշռում են զանազան բաներ: Կշռորդի ներժարների մէկի տակիցը հորիզոնական դիրքով լաւ կոփուած ատաղձեայ թեղթե կապնք, յայտնի բան է նժարը կախի ցածրանալ: Միւս նժարի մէջ այնքան կշռաքար դնենք, որ երկոքին նժարները հաւասարակշիռ լինին միմեանց: Լիտայ ջրով լեզը մէկ պնակ դնենք և կշռորդը ցած թողնենք այնպէս, որ ապակեայ թեղթը ընկնի ուղիղ ջրի երեսի վերայ: Կշռորդը կամաց կամաց վեր բարձրացնենք, մինչ

կը նկատենք, որ ապակին կը կպչէ ջրիդը և միւս նժարը կը բարձրանայ:

Այս տեղ մենք տեսնում ենք որ ապակեայ թերթը բռնվում է ջրից: Ուրեմն մենք այստեղ էլ հանդիպում ենք ձգողութեան: Երկուկների այսպիսի ձգողութիւնը դէպ ի հաստատուն մարմինները անվում է կպչո-նո-ղի-ն: Սկսենք կշռաքարերը դնել նժարի մէջ, որպէս զի երկոքին նժարները հաւասարակշիռ լինին միմեանց. մենք կը տեսնենք, որ մի քանի կշռաքար պէտք է դնել նժարի մէջ, որ ապա թէ ապակեայ թերթը պոկուի ջրիդը:

Եթէ մատներս ջրի մէջ մտցնենք և յետոյ հանենք, կը տեսնենք որ ջուրը կը պակսել է մատիդը, և այդ պատճառով բոլորովին թրջուել է մատը:

Մի ջրային բաժակի մէջ ածենք փոքր ինչ լիկոպոդիում ասուած բոյսի սերմ, որ կարելի է ձեռք բերել դեղատանումը: Յետոյ եթէ մատներս ձգենք այդ ջրի մէջ, նա չի թրջուիլ, այլ կը մնայ բոլորովին ցամաք:

Այս երկոքին օրինակներից մենք տեսնում ենք, որ շատ մարմինների մէջ կըպչունութիւնը հեշտութեամբ է լինում, շատերի մէջ դժուարութեամբ, և երբեմն ամենևին չէ լինում:

Ապակեայ մաքուր դաւազանին կպչում է ջուրը, բայց եթէ ճարպ քսենք դաւազանին, էլ ջուր չի կպչիլ: Ապակեայ դաւազանին մնդիկը չի կպչում, իսկ երկաթին կպչում է: Թղթի վերայ դրելը կըպչելուց կախում ունի. եթէ թղթին ճարպ է քսած, նորան թանաքը չի կպչիլ:

Ջրով լիքը բաժակը եթէ փոքր ինչ թեքես, ջուրը կսկսի դրսի կողքերից թափուիլ: Երկուկների թափուիլը այդ հանգամանքից ազատելու համար, ամանների բերնին մի առանձին դուրս ընկած պըռունդ են աւելացնում: Ջրկիրները եթէ լայնաբերան ամաններով են ջուր բերում, ջրի երեսին կըր տախտակներ են ձգում, որ լճլճկալուց՝ ջուրը դուրս չը թափուի:

Երբ որ բաժակի մէջ ջուր ենք ածում, նկատում ենք, որ ջուրը բաժակի կողքերի մօտերումը բարձրանում է, իսկ մէջ տեղը բոլորովին հաւասար էլինում: Բայց եթէ այս մի և նոյն փորձը անդիկով անելու լինինք, կը տեսնենք, որ նա, ջրի հակառակ, կողքերից կը ցածրանայ. այս կարելի է տեսնել և ջերմաչափի խողովակի մէջ: Այս նորանից է յառաջ գալիս, որ ջրի մասունքների մէջ աւելի ձգողութիւն կայ դէպի ապակին, քան թէ իրար մէջ, իսկ անդկի մասունքները աւելի ձգողութիւն ունին դէպի իրար՝ քան թէ դէպի ապակին:

Սոյնպէս եթէ վերցնենք մի ապակեայ նեղ և երկու կողմից բաց խողովակ, նորա մի ծայրը մտցնենք բաժակի ջրի մէջ, ջուրը նորա մէջ կը բարձրանայ այնքան, որ դորա մակերևոյթը բաժակի ջրի մակերեւոյթից բարձր կը լինի: Որքան նեղ լինի խողովակը, այնքան աւելի բարձր կը լինի ջուրը նորա մէջ: Մեծ ամանների մէջ ջուրը չի կարող այսչափ բարձրանալ, պատճառ՝ ապակու ձգողութիւնը այնքան շատ չէ, որ կարողանայ մեծ քանակութեամբ ջուր բարձրացնել. ձգողութիւնը չի կարող հրաժարեցնել ջրի ծանրութիւնը: Բայց նեղ խողովակի մէջ ջրից մնում է մի բարակ սիւնակ, այնպէս որ ապակու ձգողութիւնը կարող-

նում է այդ ջրհղկն սիւնի ծանրութիւնը յաղթել և քարշել դէպի իրան։ բայց եթէ ջրի տակ վերցնենք անդիկ և նորա վերայ կառուցունք այս փորձը, կը տեսնենք որ խողովակի միջի անդիկը բաւականաչափ ցածր է բաժակի մէջ եղած անդիկից։ Որովհետև հեղուկի այս տեսակ բարձրանալը աւելի շատ է լինում և պարզ է երևում մազաչափ նեղ խողովակների մէջ, այդ պատճառով էլ այս երևոյթը անուան վրա է մազականութիւն։

Ծակոտկէն, փխրուն, սպունգանման և փոշեհատիկ մարմինները մազականութիւն ունենալով ներս են ծծում ջուրը։ Այդ մարմինները շատ ծակոտիքներ ունին, որոնք նման են մեր վերը յիշած մազաչափ նեղ խողովակներին. դոյն այդ ծակոտիքներով ջուրը սկսում է բարձրանալ։ Այսպէս աւազը, շաքարը, չոր փայտը, մոխիրը և ուրիշ սոցա նման մարմինները վարի կողմից որ թրջվում են, այդ թացութիւնը ներս ծծելով հասցնում են իրանց վերին մասներին։ Այն շինութիւնները որոնց պատերը շինուած են ծակոտկէն քարերից, այն էլ խոնաւ տեղ, միշտ խոնաւ են լինում։ Մազականութեան վերայ է հիմնուած ծծան թղթի գործածելը, որով ցամաքեցնում են նոր գրութիւնները։ Հողերիններից իւղային բիծերը մաքրելու համար, նոցա վերայ ծծան թուղթ են դնում և դորա վերայ քսում տաքացրած արդուկ։ Պանթեղների և մոմերի մէջ եղած պատրոյգները նորա համար են, որ իւղը կամ հալցրած ճարպը նոցա միջով բարձրանայ և հասնի բոցին։ Եթէ վերցնենք մի պատրոյգ, նորա մի ծայրը դնենք բաժակի ջրում, իսկ միւս ծայրը մի դատարկ տանի մէջ, առաջուանակից չհասց բաժակի բոլոր ջուրը կանցնի տանի մէջ։ Մազականութեան վերայ է հիմնուած և քարերի ձեղքելը։ Դորա համար քարի մէջ մի փոքր ծակ են փորում, և նորա մէջ դնում են չոր փայտից շինած սեպեր։ Յետոյ այդ սեպերի վերայ ջուր են ածում, ջուրը լցվում է փայտի ծակոտիքների մէջ, այնպիսի ուժով, որ սեպերը սկսում են աւելի և աւելի ընդլանալ և վերջապէս ճեղքել քարը։

Բայց ինչու համար ջուրը չի բարձրանում նաև քարի, ոսկու և ուրիշ պինդ մարմինների մէջ։ Չէ՞ որ դոքա էլ ունին ծակոտիքներ։ Մենք գիտենք որ այսպիսի մարմինների միջով էս կարելի է ջուր անցկացնել. հարկաւոր է միայն ահագին ուժ գործ դնել։ Բայց որ ջուրը չի բարձրանում այս տեսակ մարմինների միջով, դորա պատճառն այն է, որ հեղուկ մարմինները բաւականին խտութիւն ունին և չեն կարող անցնել այսպիսի անչափ նեղ խողովակների միջով։ Մազականութիւնը ներգործում է միայն այնպիսի խողովակների վերայ, որոնք մարդու մազից աւելի բարակ չեն։

Ի. Գ.

Ծանրութիւն.

Երբ որ վերցնում ենք մի երկաթէ ռումբ, մենք զգում ենք, որ նա քարշում է մեր ձեռքը դէպ ի ցած։ Սա ի՞նչից է։ Այդ նորանից է, որ ռումբը ծանր է։ Որքան ծանր լինի մարմինը, այնքան աւելի կը ճնշէ ձեռքը, կամ որ և իցէ մի բան, որ դնում ենք նորա տակին։ Եթէ ռումբի փոխանակ քար դնենք ձեռաց վերայ,

դա ևակը ձնշէ, բայց դորա ձնշումը առաքելոյ պակաս կը լինի, պատճառ, քարը առաքելոյ պակաս ծանրութիւն ունի։ Եթէ մի կաղը փայտ դնենք, դորա ձնշումը աւելի քիչ կը լինի։ Իսկ եթէ ձեռաց վերայ դնենք բմբուլ, համարեա ոչինչ ձնշում չենք զգալ, պատճառ՝ այդ մարմնի ծանրութիւնը չափազանց քիչ է, կամ ուրիշ խօսքով ասենք, դա խիստ թեթև է։ Դնենք ձեռաց վերայ մի գառաւարկ բաժակ, մենք քիչ ձնշում կը զգանք։ Լայց եթէ բաժակը ջրով լցնենք և այնպէս դնենք ձեռաց վերայ, մենք բաւականին ձնշումն կը զգանք, պատճառ, ջուրը ծանր մարմին է։ Ինչ և իցէ՝ ամենայն մարմին քիչ կամ շատ ձնշում է իւր տակը եղած բանի վերայ, ապա ուրեմն ամենայն մարմին ունի ծանրութիւն։

Այդ ձնշումը, որ գոյ են տալիս մարմինները միմեանց վերայ, ասվում է կշիռ։ Մենքը պիտին զանազան անուններ կշիռների, օրինակ, ֆունտ կամ գրուանքայ, փութ, մեսաք, լօտ։ Ա՛ր առնենք երկու մարմին, մէկը թող լինի մի մեծ սպունդ, իսկ միւսը հրացանի գնդակ։ Այս երկու մարմիններից որն է աւելի շատ ծանրութիւն բռնում։ Յայտնի բան է սպունդը։ Սպունդի բռնած տարածութիւնը, կամ ասենք նորա իսկ ծաւալը աւելի մեծ է քան թէ գնդակինը։ Այդ մարմիններից որը աւելի շատ կշիռ ունի։ Դարձեալ հրացանի գնդակը։ Այս երկու մարմիններից որն է աւելի շատ ծանրութիւն բռնում։ Յայտնի բան է սպունդը։ Սպունդի բռնած տարածութիւնը, կամ ասենք նորա իսկ ծաւալը աւելի մեծ է քան թէ գնդակինը։ Այդ մարմիններից որը աւելի շատ կշիռ ունի։ Դարձեալ հրացանի գնդակը։ Այս այդ ինչից է յառաջ գալիս։ Սպունդի մէջ բաղմաթիւ մեծամեծ ծակոտիքներ կան, մինչդեռ կտորի մէջ այդ ծակոտիքները անչափ մանր են։ Հետևաբար կտորի ծաւալը թէև փոքր է, բայց նորա մէջ նւելի շատ պինդ մասունքներ կան, քան թէ սպունդի մէջ, որի ծակոտիքները օդով են լցված։ Սովորաբար ընդունված են ասում այն մարմիններին, որոնք շատ ծաւալ ունին և սակաւ կշիռ։ Որա հակառակ այն մարմինները որոնք փոքր ծաւալ ունենալով մեծ կշիռ ունին, ասում են ծանր։ Այսպէս ասում են սպունդը թեթև է, կապարը ծանր է։

Մարմինները կշռելով՝ մենք նոցա համեմատում ենք փութի ֆունտի և այլ կշռանների հետ և հասկանում ենք թէ նորա քանի՞ անգամ ծանր են կամ թեթև փութից, ֆունտից, և այլն։ Իսկ եթէ ուզում ենք իմանալ թէ մի մարմնի կշիռը քանի՞ անգամ շատ է կամ քիչ մի այլ մարմնից, քանի որ նորա ծաւալը հաւասար է, այդ ժամանակ մենք դանում ենք մարմինների տեսակարար կշիռը։ Ինչպէս որ կշռելու ժամանակ մենք համեմատում ենք մարմինները փութի ֆունտի և այլ կշռանների հետ, նոյնպէս մարմինների տեսակարար կշիռը որոշելու ժամանակ համեմատում ենք նրանց ջուր ջրի հետ։ Ուսումնականները ջրի տեսակարար կշիռը ընդունել են միութեան տեղ, այս ինքն ընդունել են որ նորա տեսակարար կշիռը հաւասար մէկի (=1)։ Ուրեմն եթէ մեզ տանեն, թէ արծաթի տեսակարար կշիռը հաւասար է 10, այդ կը նշանակէ թէ ջուց արծաթը 10 անգամ ծանր է ջրից։ Կամ թէ ոսկու տեսակարար կշիռը =19, մենք կարող ենք ասել, եթէ վերցնենք մէկ խորանարդ ոտնաչափ ոսկի և մէկ խորանարդ ոտնաչափ ջուր, ոսկին 19 անգամ ծանր կը լինի ջրիցը։ Լուսնոսկու տեսակարար կշիռը =21, սնդիկինը =13 $\frac{1}{2}$, կապարինը =11, պղնձինը =9, անագինը և երկ-

կաթինը = 7, սառուցինը = $\frac{9}{10}$, եղևնափայտինը = $\frac{1}{2}$, անկախայտինը = $\frac{1}{4}$, և այլն։

Մէկ միաբնանի ապակեայ խողովակի մէջ ածխնք անդիկ, ձէթ և ջուր, և սկսինք սաստիկ ցնցահարել։ Այդ երեքին մարմինները կը խառնուին միմեանց հետ, բայց խողովակը դնենք սեղանի վերայ և թողնենք մի առժամանակ մնայ։ Անդիկը խիտոյն ցած կ'իջնի և կը նստի յատակի վերայ, ջուրը կը տեղաւորուի մէջ տեղը, իսկ ձէթը ջրի գլխին կը փառուի։ Սոքա իրանց տեսակարար կշռին համեմատ կը դասաւորուին։ Այնպէս է թէ ջրի վերայ կամաց կամաց գինի ածնինք՝ կսկսի լողալ ջրի երեսին։ Պատճառ՝ գինին ջրից թեթեւ է։

ԻԴ.

ԸՆԳՈՒՅԶՈՒՄՆ.

Աննեակի մէջ շատ առարկաներ կան զբաղած։ Այդ բոլոր առարկաները իրանց տեղերումը հանդարտ ընկած են, թէ շարժուն են։ Ի հարկէ հանդարտ են ընկած, չեն շարժում տեղերից։ Ինչու որ այդպէս է։ Թէ մենք ինքներս չը շարժինք նրանց իրանց տեղերից, նոքա միշտ հանդարտ կը մնան։ Կանգ քենք այժմ գնդակին, քարին, փայտին, փչինք փետուրի վերայ։ Դոքա կը շարժին այդ ժամանակ իրանց տեղերից։ Ինչու այսպէս եղաւ։ Չեռքի ուժը հարկադրից նրանց տեղերից շարժել։ Ինչ որ շարժելու հարկադրող զօրութիւնը կը դադարի ներգործել նոցա վերայ, նոքա այնուհետև էլի կը շարժին փոքր ինչ ժամանակ, յետոյ կը դադարին և կընդունին իրանց առաջուան անշարժ դրութիւնը։

Դոքա Երնչելիի մարմիններ են, անկշռինք, թէ կունդանի։ Ընկեանք մարմիններ են։ Այս տեսակ մարմինները ինքն իրանց չեն կարող շարժել։ Դոքա իրանց տեղերումը հանդարտ են մնում և այդպէս էլ միշտ կը մնան, եթէ մի որ և է զօրութիւն դոցա վերայ ազդելով՝ շար ժում չը պատճառէ։

Վերք առնինք մէկ ոեզինի գնտակ և գլորենք սեղնկի յատակի վերայով։ Ինչու համար այդ գնտակը գլորուեցաւ մինչև պատը, որին զարկուելով յետ ցատկեց և շուտով սկսաւ կանգ առնել։ Ինչու համար նա պատին հանդելուց յետոյ էլ չը կարողացաւ իւր գլորուիլը առաջուան ուղղութեամբ շարունակել։ Որովհետև որ ճանապարհին նա հանդիպեցաւ արգելքի, և այդ արգելքն եղաւ ինքը պատը, որ թոյլ չը տուաւ գնտակին աւելի հեռու երթալ։ Եւ որովհետև մենք այդ գնտակը բաւականին ուժով գլորեցինք, այդ պատճառով նա զարկուեցաւ պատին և մի յետադարձ ոստիւն արաւ։ Եթէ յիշենք ինչ որ խօսեցել ենք առաձգականութեան մասին, հեշտ կը լինի մեզ հասկանալ դոքա յետադարձ ոստիւնի պատճառը։

Այժմ թող տանք գնտակը յատակի վերայով առաջուանից քիչ ուժով։ Մենք կը տեսնենք, որ նա կանգ կառնու սենեկի մէջ տեղումը։ Ապա ինչու համար մինչև պատը չը գլորուեցաւ։ Նորա համար որ գնտակին հաղորդուած ուժը շատ սակաւ էր, թոյլ էր։

Առաջին անգամին գնտակը աւելի հեռու կը ղլորուէր, եթէ նորա շարժողութեանը արգելք չը դառնար պատը, իսկ երկրորդ անգամին գնտակը պատին չը հասած սկսաւ կանգ առնել և հանդարտել։ Դորա պատճառը ահա ինչն էր։ Գնտակի անհարթութիւնը և օդը դանդաղացրին նորա շարժողութիւնը, և որովհետև մի և նոյն ժամանակ գնտակին շարժման մէջ ձգող զօրութիւնը շատ նուազ էր, դորա համար այդ արգելքները շուտով հեռացրին նորանից այդ զօրութիւնը և գնտակին հարկադրեցին հանդարտել։ Եթէ թնդանօթից ռումբը արձակուի կողմնակի ուղղութեամբ, արդեօք այդ ռումբը անդադար կը նետուի՞ օդի միջով, թէ ցած կընկնի երկրի վերայ և կը հանդարտի մէկ տեղ։ Յայտնի բան է նա կանցնի դեռ ևս մի որոշ տարածութիւն, որն որ այնքան մեծ կը լինի, որքան որ ռումբը թնդանօթից արձակող զօրութիւնը սաստիկ է եղել, բայց յետոյ նա կընկնի երկրի վերայ, այդ տեղ էլ մի առ ժամանակ կսկսի գլորուել, և վերջապէս կանգ կառնի մի տեղ և կը մնայ անշարժ։ Այդ շարժման ընդհատութիւնը անշուշտ կը պատահի, որովհետև մի կողմից օդն է արգելում նորան, միւս կողմից երկիրն է քարշում դէպի իրան։ Ակզբումը ռումբը դուրս է նետւում թնդանօթից այնպիսի ահագին ուժով, որ երկրի ձգողութիւնը շատ նուազ ներգործութիւն է անում նորա վերայ այդ միջոցին։ Յայց երբ որ օդի խոչընդոտութիւնը կը թուլացնէ այդ ուժը, այդ ժամանակ երկրի ձգողութիւնը առաւել ևս կազդէ ռումբի վերայ և նա էլ կըսկսի աւելի և աւելի յաճախանալ դէպի երկիրը և վերջապէս ընկնել նորա վերայ։ Յայց որովհետև երկրի ձգողութիւնը անընդհատ ներգործում է ռումբի վերայ, այդ պատճառով նա չի կարող ուղիղ ընթացով յառաջ շարժել, այլ կոր գծով, առաջ դէպի վեր, յետոյ դէպի վար։ Երբ որ ռումբը կընկնի երկրի վերայ, այդ տեղ էլ մի առժամանակ կըսկսի գլորուիլ, բայց շուտով կը դադարի, պատճառ՝ երկրի անհարթ մակերևոյթը առաւել ևս կարգելէ նորա շարժումը։ Եթէ այդ արգելքները չը լինէին, երկիրն էլ ձգողութիւն չունենար, այնուհետև ռումբն էլ, քարն էլ, մի խօսքով ամենայն մարմին, որ շարժուէին տեղերից, անդադար կը շարունակուէր նոցա շարժումը և երբէք չէին կանգ առնել։

Ուրեմն կարող ենք ասել թէ ամենայն մարմին որ անշարժ կայ մի տեղ, նա այդպէս էլ միշտ կը մնայ, եթէ մի որ և իցէ զօրութիւն չը ձգէ նորան շարժման մէջ։ Ամենայն մարմին, որ շարժման մէջ է, շարժում է, նորա այդ շարժումը անընդհատ կերպով կը շարունակուի, մինչև մի որ և իցէ արգելք չը ընդհատէ, չը դադարեցնէ նորա շարժումը։ Ահա այս յատկութիւնը որ ունին մարմինները՝ ասվում է անբոջո-ընե։

Ընդործութեան վերայ շատ երևոյթներ կան հիմնուած, որոնք սկզբումը մեզ անհասկանալի են թվում։ Եւ յաճախ երբ որ մենք վարում ենք արտաքինութեամբ, չենք կարողանում մեկին ի մեկ կանգ առնել, մեր մարմնոյ անընդհատութիւնը կամենում է էլի փոքր ինչ յառաջ շարժել։ Կառքի մէջ եղած ժամանակներս, երբ որ կառքը արագ երթալուց յետոյ յանկարծ

կանգնում է, մեր մարմինը արդէն ունեցած շարժումը յառաջ տանելով ընկնում է դէպի յառաջ։ Այսպէս երբ որ ուղում ենք կառքի վազած ժամանակը դուրս նետուիլ նորանից, եթէ մեր ոտքերը դէպի առաջ չանենք՝ մեր կընկնենք այդ կողմի վերայ։ Զին եթէ չափ է ընկնում՝ յանկարծ վերայի մարդը ընկնում է իւր քամակի վերայ, իսկ եթէ չափ ընկած միջոցին յանկարծ կանգնում է, հեծեալը երեսի վերայ ընկնում է ձիու դլխին։ Այս օրինակի մէջ առաջին դիպուածումը անդործութիւնը չէր սկսել իւր շարժումը, երկրորդ դիպուածում չէր ընդհատել այդ պատճառով էլ ձիու և հեծեալի շարժմանց մէջ անհատանաբարհշտութիւն յառաջ եկաւ։

Ո՞վ չի տեսել թէ ինչպես են ձեղքում փայտը։ Փայտ կտրատողը կացնի բերնով զարկում է փայտին, և այս կերպով կացնի բերանը մացնում է փայտի մէջ, և յետոյ այդպէս վերցնում է փայտը և կացինը շրջելով քուփովը խփում է կոճղին։ Այս սեղ կացնի շարժումը ընդհատւում է, բայց փայտը անգործութեան օրէնքով յառաջ է շարժում և ձեղքվում։

Եթէ հրացանի գնտակը ձեռքով դուրս նետենք պատուհանի ապակու միջով, ապակին քանի մի կտոր կը լինի, կը փշրուի, բայց եթէ հրացանից արձակենք այդ գնտակը նոյնպէս մի ապակու միջով, այդ ժամանակ ապակին չի կոտրտուիլ, այլ այնքան կը ծակուի՝ ինչքան որ գնտակի մեծութիւնն է, միւս բոլոր մասները կը մնան անվնաս։ Այս սեղ տեսնելն դիպուածում ապակին նորա համար կոտրուեց, որ ձեռքով ձգած գնտակի շարժումը թոյլ լինելով, անցնելու ժամանակ իւր ուժը հաղորդեց բոլոր մասներին, ներգործեց ամբողջ ապակու վերայ, իսկ երկրորդ դիպուածում հրացանից արձակուած գնտակի շարժումը այնքան արագ էր, որ ժամանակ չուներ ներգործելու բոլոր մասների վերայ։

Եթէ բաժակի վերայ մի խաղաթուղթ դնենք և նորա վերայ մի դրամ, արագ հարուածով կարելի է թուղթը այնպէս տեղահան անել, որ վերայի դրամը հետը չերթայ, այլ ընկնի բաժակի մէջ։ Երբ որ կամենում ենք ջրմուղի վերայից ցատկել միւս կողմը, մեր ոտքերը աւելի աջողակ կը լինի, եթէ փոքր ինչ հեռուից վազելով ցատկենք։ Կամաց կոթի վերայ պընդացնելու համար՝ կոթը յատակին են զարկում։ Երբ որ կոթը զարկում ենք դէպի ցած, չաքուչն էլ անգործութեան օրէնքով նորա հետ վար է իջնում դէպի կոթի հաստ կողմը և այն տեղ ամրանում։

ԻԵ.

Օդի յատկութիւնք.

Մենք արդէն գիտենք, որ մեր երկիրը շրջապատող մարմինը ասւում է օդ։ Մենք չենք տեսնում օդը. դա մեզ չէ երևում։ Օդը այնքան թափանցիկ է, որ լրանով շրջապատուած մարմինները կարելի է շատ պարզ տեսնել։ Ջրային շողինները նոյնպես անտեսանելի են լինում, բայց նորա դիպչելով պաղ առարկաներին՝ փոխարկվում են ջրի։ Բայց օդը ամենատատիկ ցուրտ եղանակներին անդամ ճոում է միշտ օդակերպ։ Մինչև այսօր ոչ մի հնարքով

դորան չին կարողացել ոչ թէ պինդ, այլ գոնէ հեղուկի դարձնել: Այս կողմանէ օդի նմանութիւն ունեցող մի քանի ուրիշ մարմիններ էլ կան. դորանցից մի քանիսի հետ մենք շուտով կը ծանօթանանք: Առաձգականահեղուկ մարմիններս մի ուրիշ անուն էլ են կրում իրանց վերայ, այդ անունն է գազ: Այդ պատճառով օդն էլ գազակերպ մարմին է:

Չը նայելով որ երկրի չորս կողմումը գրեթէ ամբողջովին են անհամար թուով օդի մասունքներ, այնու ամենայնիւ նորա տեղն են տալիս մեզ յառաջ երթալու և թոյլ են տալիս ազատ շարժելու: Այս ինչի՞ն է: Սորա պատճառն այն է, որ օդի հիւլէները, ինչպէս մենք արդէն դիտենք, միմեանց մէջ ոչ մի կցում չունին: Այդ հիւլէները մինչև անգամ աշխատում են հեռանալ միմեանցից և ունել մեծ տարածութիւն բռնել, եթէ միայն չին հանդիպում որ և իցէ արգելքի: Վերև առնենք մի բաժակ, դա այժմ լիքն է օդով: Դորա մէջ տեղը եղած օդի մասունքները արգելք են լինում վարի մասներին բարձրանալու, մէջ տեղի մասունքներին արգելք են լինում բաժակի վերայի եղած մասունքները: Եթէ հնար լինէր վերին մասները հեռացնել, այդ ժամանակ վարին մասները իսկոյն կը բռնէին նոցա թողած տարածութիւնը, և այնու ամենայնիւ բաժակը էլի լիքը կը լինէր օդով: Հեղուկների հետ այսպիսի բան չի պատահում: Եթէ ջրով լիքը բաժակից փոքր ինչ ջուր պակասացնենք, մէջի մնացած ջուրը այդ պակասի տեղը չի բռնել, չի բարձրանալ օդի պէս իրանից հեռացած մասունքների թողած տարածութիւնը լցնելու, այլ ջրի այդ թերաս տեղը իսկոյն կը բռնի օդը: Այդ իսկ պատճառով գազակերպ մարմինները պահպանելու համար, հարկաւոր է պինդ կնքած անոթների մէջ պահել:

Թէպէտ և օդի մասունքները միմեանց հետ կցում չունին, բայց այնու ամենայնիւ նոքա ցոյց են տալիս ընդդիմութիւն: Մի թերթ թուղթ վերցնենք և երկու ձեռով բռնենք հանդիպահայեաց կողմերից, և սկսենք յառաջ երթալ այդպէս՝ նախ կամաց կամաց և յետոյ սկսենք վազել: Օդը կսկսի ընդդիմանալ թղթի շարժմանը և դէպի յետ կը թեքէ նորան: Որքան արագ վազենք, այնքան այդ թեքումը սաստիկ կը լինի: Ուրեմն օրքան որ մարմինը արագ է շարժում, այնքան առաւել ընդդիմութիւն է գտնում նա օդի կողմից: Չին արագ ընթացքի դէպք ժամանակ օդը այնպէս է պարկվում մեր երեսներին, որ կարծում ենք թէ սաստիկ քամի է: Մինչդեռ եղանակը շատ հանդարտ է:

Ինչից է յառաջ գալիս երկրի հրդեհ ծոցը

Պատուհանի սպիտակ ապակու բարակ թերթը թափանցիկ է և անգոյն. բայց եթէ մի քանի հատ այսպիսի թերթիկներ վերցնենք և միմեանց վերայ դարսենք և ապա նայենք նորանց միջովը, այդ ժամանակ դոքա կերևին մեզ կապոյտաւուն կանանչ գոյնով: Այդ գոյնը կը տեսնենք մենք նաև, եթէ նայենք թերթի երկայնութեան ուղղութեամբը: Այս մի և նոյն է պատահում և օդի հետ: Փոքր քանակութեամբ օդը բոլորովին թափանցիկ է, իսկ մեծ քանակութեամբ երևում է մեզ երկնագոյն, այսինքն բաց-կապոյտ դոյ-

նալ : Ամէ երկնքի կապոյտ գոյնը օդին կախումն ունի, այդ արդէն ապացուցուած է: Ուարձր լեռներուն գագաթներէն՝ որ նայում են երկինքին, նա բոլորովին սեւ է երեւում, որովհետեւ սարերի վերայ օդը չնչոտ է, այնքան խտութիւն չունի՝ որ կարողութիւն յառաջ բերէ:

ՕԴԻ ՁՆՇՈՒՄԸ ՑՈՒՑԱՊԱՏԵՒ:

Ընդհանրապէս օդն էլ ծանրութիւն ունի

պրպեօ:

Ընդէն շատ վաղուց գիտնականներին յայտնի էր հետեւեալ հանգամանքը: Եթէ ջրի մէջ ընկղմենք երկար խողովակի մի ծայրը՝ այդ խողովակի մէջ մտցնենք մի մոց, այնպէս որ ծայրը հասնի մինչեւ ջրի երեսին, յետոյ սկսենք վեր քաշել մոցը, ջուրը կսկսի մոցի հետեւից վեր բարձրանալ: Առաջուան գիտնականները սկզբում այս երեւոյթը այսպէս էին բացատրում, թէ բնութեան մէջ չի կարող լինել դատարկ տարածութիւն, ասում էլ էին մինչեւ անգամ թէ՝ բնութիւնը վախենում է դատարկութիւնից: Մի անգամ հարկաւոր էր 50 ոտի բարձրութեան ջուր վեր քաշել. կարծում էին թէ ջուրը այդքան էլ դժրանից աւելի չէ բարձրանայ, բայց ինչ, ջուրը միայն 34 ոտ բարձրացաւ, էլ այն տեղէն վեր եկնել չը կամեցաւ, և մի եւ նոյն ժամանակ մոցի եւ ջրի սրանքը մնաց բոլորովին դատարկ: Այս տեղ գիտնականները իրանց առաջուան տուած սահմանի եւ բացատրութեան հակառակ երեւոյթի հանդիպելով՝ մտածին սաստիկ, չիմացան թէ ինչպէս մեկնեն այդ երեւոյթը: Ինքն որ զարմանալի է: 34 ոտ բարձրացել է՝ էլ չի կամենում տեղից շարժել, նա ինչ կը նշանակէ: Վերջապէս երեւելի Տորիչելլին գոյց տուաւ՝ թէ ջրի այդ դադարումը օդի ձնշումից կախումն ունի, թէ դրսի օդը իւր ծանրութեամբը միայն այնքան է ձնշում ջրին, որ նա կարողանում է դատարկ, օդ չեղած տարածութեան մէջ վեր բարձրանալ միայն 34 ոտք: Տորիչելլին իւր տասնը փորձով հաստատելու համար, այս մի եւ նոյն գործողութիւնը ընդհակառակ կատարեց: Նա տասը անդիկը տասն երեք ոտ կէս տանգամ ջրից ծանր է, ուրեմն եթէ ջուրը օդի ձնշմամբը բարձրանում է 34 ոտք, սնդիկը պէտք է բարձրանայ դրանից $13\frac{1}{2}$ անգամ քիչ աւել և եթէ 34 բաժանած $13\frac{1}{2}$ տեղ, որ եթէ բաժանենք՝ կրստանանք համարեա 30 մատնաչափ, կամ մի արշինից մի քիչ քան աւել: Ահա ձշմարիտ որ սնդիկը բարձրանում է միայն 30 մատնաչափ:

Օդի ձնշումը աւելի շօշափելի կացուցանելու համար կարող ենք հետեւեալ հասարակ փորձը անել: Վերցնենք մի ինչպիսի և իցէ խողովակ երկու կողմէն բաց: Դաց բերաններից մէկը մատով սեղմենք, որ օդ չը մտնի, միւս ծայրը դնենք բերանները և դուրս ծծենք նորա մէջ եղած օդը: Այսպէս օդը բաւականացաւ պատարկելուց յետոյ, իսկոյն այդ բերանն էլ սեղմենք մատով՝ որ ոչ մի բերանից օդ չը մտնի ներս, յետոյ մէկ ծայրը ջրի մէջ ընկղմելով բաց անենք ջրի մէջը եղած բերանը, իսկ դրսի բերանը, սեղմած պահենք: Ջուրը կսկսի վեր բարձրանալ

խողովակի միջով, և եթէ լաւ դատարկած լինենք օդը, բոլորովին կկտուի խողովակը։ Եթէ դրսի բերանը փակած պահելով խողովակը դուրս հանենք ջրիցը, ջուրը չի թափուիլ վայր, այլ կը մնայ խողովակի մէջը, չը նայելով որ բաց է վարի բերանը, բայց եթէ վերի բերանն ևս բանանք, ջուրը կսկսի թափուիլ։

Այժմ բացատրենք այս երևոյթը։ Ինչը հարկադրից ջրին առաջ բարձրանալ, յետոյ վայր հեղուլ։ Պէտք ունինք ուշի ուշով, տեսանենք ինչ է պատահում օդի հետ այդ փորձի ժամանակ։

Նրբը որ բերանով խողովակի օդը դուրս ենք ծծում, նորա մէջի օդը եթէ բոլորովին չի դուրս գալիս, գոնէ շատ քչանում է, անօսրանում է։ Դորա հակառակ, դրսի օդը դորա պէս անօսր չէ, նորա խտութիւնը այնքան է նուազքան որ խողովակի մէջ եղած առաջուան օդի խտութիւնն էր։ Դրսի օդի մէջ աւելի շատ անհաւասարներ կան, քան թէ խողովակի օդի մէջ։ Պատճառն է որ շրջապատող օդը ծանր է խողովակի օդից. ուրեմն և աւելի ճնշում կպղէ ջրի վերայ՝ քան թէ նա։ Այդ պատճառով ջուրը դրսի օդից ճնշուելով և խողովակի միջից ոչ մի արգելքի չը հանդիպելով, կսկսի բարձրանալ դէպի վեր։ Հանում ենք խողովակը ջրից, բայց ջուրը մնում է խողովակի մէջ, չի թափվում։ Այս տեղ ևս մի և նոյն օդի ճնշումն է ներգործողը։ Օդը դրսևից ճնշելով, արգելք է լինում ջրի թափուելուն։ Բայց միւս բերանը բանալուն պէս, իսկոյն թափվում է ջուրը, պատճառ՝ օդը երկու կողմից էլ սկսում ճնշել ջրի վերայ։ Նրբը որ ճնշումը երկուսանք հաւասար է, այդ ժամանակ ջուրը իւր ծանրութիւնը բանող նեցուկ չունենալով, սկսում է վայր հոսել։ Բանալիքի ծակից եթէ դուրս ծծենք օդը և խսկոյն դնենք լեզուի վերայ, նա կը կպչի լեզուիցը. դրսի օդի ճնշումն է նորան այդ դրութեան մէջ պահողը։

Ուրեմն մենք տեսնում ենք, որ օդն էլ ունի ծանրութիւն, բայց շատ փոքր է, համեմատելով ուրիշ մարմինների ծանրութեան հետ։ Եթէ միաչափ ծաւալով ջուր և օդ վերցնենք, օդի ծաւալը 700 անգամ թեթև կը լինի ջրից. կամ որ մի և նոյն է ասել օրինակի համար, մէկ ֆունտ ջուրը օդքան տեղ որ բռնում է, օդը 700 այնպիսի տեղ է բռնում։ Մէկ խորանարդ ոտնաչափ օդը կշռում է $8\frac{1}{2}$ մխոալ։

Գիտնականները հաշուելով իմացել են, որ օդը մարդու վերայ այնքան ճնշումն ունի, որքան որ 30,000 ֆունտը (750 փութ)։ Այսպիսի ահագին ծանրութիւնը կարող է մարդուն բոլորովին ճմլել, բայց մարդու մարմնու մէջ էս օդ կայ, որի խտութիւնը հաւասար է դրսի եղած օդի խտութեանը. դորա համար այդ ճնշումները փոխադարձաբար հաւասարակշռվում են, և մարդու վերայ օդի ծանրութիւնը ներգործութիւն չի անում։ Այդ իսկ պատճառով սապոնի պղպջակները չեն պայթում։ Պատասխանդ որ օդի ճնշումը լինում է ամեն կողմից, այդ պատճառով չեն արգելում մարդուն շարժելու։ Բայց եթէ ճնշումը լինի միայն մէկ կողմից, եթէ յանկարծ մի կողմից օդը վերանար և դատարկ տարածութիւն բացուէր, միւս կողմից օդի ճնշումը այնքան սաստիկ կը լինէր, որ կը ճմլէր մարդուն և կսպանէր։ Այսպէս օրինակի համար, եթէ մի թղթի

կտոր վառելով ձգենք բաժակի մէջ և իսկոյն ձեռքով ծածկենք՝ ձեռքը կը կպչի բաժակից: Եթէ այդ մի և նոյն փորձը աւելի ձշդութեամբ, մարմնի աւելի քննքուշ տեղի վերայ անենք, կաշին կը դջլուի, պատճառ՝ բաժակի մէջ օդ չը լինելով՝ մարմնոց օդը սաստկապէս կը հրէ կաշին դէպի վեր:

Օդի ձնշումը ամեն անդամ միատափ չի լինում, երբեմն շատ է լինում և երբեմն սակաւ: Երբ որ օդը անօսր է, ձնշումն էլ քիչ է լինում, պատճառ՝ այդ ժամանակ օդի մէջ քիչ անհատներ կան: Օդի ձընշումը չափելու համար մի գործիք են հրնարել, որ անուանվում է ծանրաչափ, այսինքն օդի ձնշման ծանրութիւնը չափող: Ծանրաչափ պատրաստելու համար ընտրում են այնպիսի մի ապակեայ խողովակ, որ ունենայ նեղ և հաւասարչափ տրամագիծ: Այդ խողովակի մի ծայրը կորացնում են: Ընդհակառակ ծանրաչափը ունենում է երկու մասն կամ երկու սրունք, մէկը կարճ և միւսը 30—40 մատնաչափ երկայնութեամբ: Ծանրաչափի կարճ սրունքի ծայրը բաց են թողնում, իսկ երկայնի բերանը զօդում են: Կարճ սրունքի ծայրը երբեմն կլորցնում են և կիսագնդի ձև են տալիս, բոլոր խողովակը սնդիկով լցնում են, այն ամեն զգուշութիւնները պահպանելով, ինչ որ ասել ենք ջերմաչափ պատրաստելու համար:

Ծովրորվին պատրաստի խողովակը դրնում են շրջանակի մէջ, որի վերայ ամրացնում են և մի շարժական տախտակ, այդ տախտակի վերայ գծեր են քաշում մի մի մատնաչափ հեռաւորութեամբ: Որովհետև կարճ սրունքը բաց է, և այդ տեղից է սկսում օդը ձնշել սնդիկի վերայ, այդ պատճառով դորա մէջ սնդիկը ցածրանում է, իսկ երկայն սրունքի մէջ բարձրանում: Երբ որ կամենում են հաշուել թէ երկայն սրունքի մէջ սնդիկը քանի՛ մատնաչափ է ցածրացել կամ բարձրացել, այդ ժամանակ յիշեալ շարժական տախտակը առաջ են քաշում այնպէս, որ նորա վերայ նշանակած զրօն կարճ սրունքի մէջ եղած սնդիկի մակերևոյթին հաւասար լինի: Ընդհակառակ ծանրաչափը ասվում է Սիփոնեան ծանրաչափ: Կան և ուրիշ տեսակ ծանրաչափներ:

Ընդքան վեր ենք բարձրանում սարի վերայ, այնքան օդի ձնշումը սկսում է պակասիլ: Ընդ հակառակն է: Խարձր սարերի վերայ եղած օդի մասունքները քիչ ձնշողութեան են ենթարկուած, քան թէ սարի ստորոտումը՝ որ տեղ աւելի շատ օդի մասունքներ կան: Ընդ պատճառով ծանրաչափը կարելի է գործ դնել և սարերի բարձրութիւնը իմանալու համար:

Գիտնականները նկատել են, որ ամեն մի մատնաչափ սնդիկի ցածրանալիս սարի բարձրութիւնը աւելանում է հետ զհետէ աւելի շատ և ոչ հաւասարաչափ: Երբ որ ծանրաչափի բարձրութիւնը մինչև 29 երրորդ մատնաչափը ցածրանում է, սարի բարձրութիւնը լինում է 980 ոտնաչափ, եթէ հասնում է 28 երրորդին, բարձրութիւնը լինում է 1820, եթէ 27 մատնաչափ է սնդիկի բարձրութիւնը, սարը լինում է 2790, և այլն:

Ձիմբորասօ լեռան վերայ, որ 20800 ոտնաչափ բարձրութիւն ունի, ծանրաչափը ցոյց է տալիս 13 մատնաչափ: Դա-

ալապղիրի վերայ 25,000 ոտնաչափ բարձրութեամբ, — միայն 11 մատնաչափ։

Երբ որ մի որ և իցէ տեղ օդը տաքանում է, նա մի և նոյն ժամանակ լայնանում է և անօսրանում, և այդ պատճառով նորա ձնշումը պակասում է։ Ալպիսի դիպուածներում ծանրաչափի սընդիկը ցածրանում է։ Որա հակառակ պաղ և թանձրացած օդը աւելի է խտանում, և այդ պատճառով աւելի էլ ձընշում է և սնդիկը բարձրանում է ծանրաչափի մէջ։ Հարաւային և արևմտեան հողմերը բերում են մեզ մօտ խոնաւ և աւելի տաք, ուրեմն և թեթև օդ. դորա համար այդպիսի ժամանակները ծանրաչափի մէջ սնդիկը ցածրանում է։ Իսկ հիւսիսային հողմերը բերում են մեզ մօտ պաղ և ցամաք օդ, որ աւելի ծանր է լինում, և այդ միջոցին ծանրաչափի մէջ սնդիկը բարձրանում է։ Խոնաւ օդը յառաջ է բերում անձրևներ, իսկ ցամաք օդը՝ պարզ եղանակ։ Ուրեմն ծանրաչափի մէջ սնդիկի բարձրանալն ու իջնելը կարող է ցոյց տալ վերահասնելի կամ ներկայ եղանակը։ Այս հանդամանքը վաղուց է նկատուած և մարդիք ծանրաչափը համարել են՝ նախատուշակող եղանակի։ Այդ նպատակի համար հարկաւորութիւն չկայ ծանրաչափը բաց օդում պահելու։ Դրսի օդը սենեակի մէջ է մտնում և այդ պատճառով օդի ձնշումը ամեն տեղ միանման է։ Սովորաբար ծանրաչափների վերայ դրում են, որ եղանակ որ համապատասխանում է սնդիկի այս կամ այն բարձրութեանը (պարզ, փոփոխական, անձրև, փոթորիկ)։ Սակայն հարկաւոր է ասել որ՝ ծանրաչափը ամեն ժամանակ ճշդութեամբ չի ցոյց տալիս եղանակը։ Այդ հանդամանքը ծանրաչափի անճշդութիւնից չի յառաջ գալիս, այլ եղանակն ինքը կախում ունի բազմաթան պատճառներից, որոնք շատ անգամ չեն ներդործում ծանրաչափի սնդիկի վերայ։

ԻԲ.

Օդի «եղ»-ելը կամ ձնը-ելը.

Գիտնականները հաշուել են որ երկիրը շրջապատած է օդով, որպէս մի այնպիսի թաղանթով, որի հաստութիւնն է 70 վերստ։ Այդ օդեղէն թաղանթին համառօտութեան համար ասում են ՏՐՈՓՈՍՓԵՐ։ Մթնոլորտի վերին մասներում օդը անօսր է, պատճառ՝ այն տեղ ոչ մի ձընշում չը կայ։ Բայց որքան մօտիկ է երկրից օդը, այնքան նա խիտ է, պատճառ՝ ստորին մասանց վերայ ձնշում են օդի վերին մասները։ Այդ պատճառով երկրի մակերևոյթի վերայ եղած օդը սեղմուած է և մենք կենում ենք այդ սեղմուած օդի մէջ։

Տեսնենք այժմ թէ կարելի՞ է արդեօք աւելի ևս ձնշել օդը։

Վերս առնենք մէկ ծայրը զոդած խողովակ մօտի հետ։ Խողովակի մէջ սակաւ ինչ ջուր ածենք և նորա մէջ մտցնենք մօտը։ Այնպէս պէտք է բռնել խողովակը, որ զոդած ծայրը վերի կողմումը լինի, իսկ մօտը վարի։ Այդ ժամանակ ջուրը կընկնի մօտի վերայ, իսկ ջրի վերայ կը հաւաքուի օդը։ Սկսենք ներս հրել մօտը։ Մօտը կը ձնշէ ջրի վերայ, իսկ ջուրը կըսկսի աւելի և աւելի սեղմել օդը։ Այդ պատ-

ձառով խողովակի մէջ եղած օդի ծաւալը կսկսի քիչ քիչ պակասել, ուրեմն օդը ձնշվում է, սեղմվում է։ Որքան աւելի ենք սեղմում խողովակի օդը, այնքան նա աւելի է աշխատում տարածուել, սեղուել դէպի ամեն կողմ, այսինքն աւելի մեծ տարածութիւն բռնել։ Երբ էլեփազանց ներս հրենք մխոցը, խողովակը կը ձեղքուի, կը կոտրուի, պատճառ՝ օդը սաստիկ ձնշելով խողովակի կողքերքի վերայ, կը հեռացնէ ապակու մասունքների կցումը։ Բայց հենց որ ընդհատենք մխոցի ներս հրումը և չը սեղմենք այլ ևս օդը, նա էլ ոչ մի արգելք չունենալով, կսկսի լայնանալ և դուրս կը նետէ ջուրն էլ մխոցն էլ։ Ուրեմն օդը կարող է, համ ձնշուիլ համ լայնանալ, և պատկանում է առաձգական մարմինների կարգին։

Վ՚եր առնենք մի փոքրիկ սբրուակ, կիսով չափ ջրով լցնենք և բերանը փակենք մի ծակ խցանով. խցանի ծակից սրուակի մէջ մտցնենք մի բարակ և սրածայր խողովակ, սուր ծայրը վերևից, իսկ միւս ծայրը հասցնենք մինչև սրուակի յատակը, միայն չը կպցնենք յատակին։ Խցանը լաւ ամրացնենք զմուռսով, կամ մոմով, որ ամենեւին օդ դուրս գալու տեղ չը լինի խողովակի ափերից։ Սկսենք խողովակից շունչ ներս փչել մեր բերանով սրուակի մէջ։ Օդը ջրի միջով անցնելով պղպջակների ձևով կը հաւաքուի սրուակի վերին մասնումը։ Այդ պատճառով այն տեղ օդը սկսում է հետ դհետէ աւելի սեղմուել, քանի որ մենք շարունակում ենք փչելը։ Երբ որ ընդհատենք փչելը՝ այդ ժամանակ ձնշուած օդը մեծ տարածութիւն բռնելու ձիգ ցոյց տալով, կսկսի ձնշել ջրի վերայ, ջուրը կսկսի բարձրանալ խողովակովը և դուրս ցայտել շատրուանի պէս։ Այս տեսակ ջրբուղեներըը կամ շատրուաններըը ասվում են Հերոնեան աղբիւր, պատճառ՝ դորա առաջին շինողի անունը եղել է Հերոն։ Մեծամեծ շատրուանների գործողութիւնն էս այս մի և նոյն օրէնքովն է յառաջ գալիս։

Մանուկներըը շատ անգամ զուարճանում են հետևեալ խաղալիքովը։ Այդ խաղալիքը մի որ և իցէ բանից շինած՝ մի խողովակ է երկու կողմէն բաց, մէկ փոքրիկ ձիպտու և մէկ էլ կարտոֆիլից կտրտած գնդակներ կամ հնսարակ կտորներ։ Երեխան վեր է առնում այդ կարտովլի կտորիկը դնում է խողովակի մէկ բերանումը, և ձիպտով հրելով հասցնում է մինչև միւս ծայրը և թողում է այն տեղ, յետոյ վերցնում է մի ուրիշ կտոր, այն էլ սկսում է առաջինի պէս հրել։ Բայց առաջին կտորը դեռ այս վերջինէն չը ազատուած դուրս է արձակվում զզալով և բաւականին հեռու տեղ ընկնում։ Վ՚երջին կտորիկը մնում է խողովակի կիսումը, երեխան ձիպտով հրում է հասցնում ծայրին և սկսում նորա հետևից էլի մի ուրիշը հրել, սա էլ խողովակի կիսուն հասած չը հասած ծայրին եղած կտորը առաջուանի պէս դուրս է ընկնում տրժժալով։ Այս տեղ աշկարայ երևում է օդի ներգործութիւնը։ Երկրորդին կտորների արանքը օդով է լեցը։ Երբ որ մէկ կտորը հրվում է դէպի միւսը՝ օդը սեղմվում է, որով և ձնշում է միւս ծայրին եղած կտորի վերայ և դուրս նետում նորան։

Շատ անգամ հարկաւոր է լինում մշակներին ջրի տակին աշխատել. օրինակ, երբ որ մի որ և իցէ նաւ կոտրւում է և նորա մէջ եղած ապրանքները ընկղմւում են ջուրը և իջնում յատակի վերայ: Այսպիսի աշխատութեանց ժամանակ գործ են դնում ջրասոյզ պանգակ ասուած գործիքը: Այդ զանգակը շինուած է հետևեալ կերպով: Ներկայացրէք ձեզ մի քառակուսի ձևով մեծաղից շինած արկղ, այնքան մեծութեան՝ որ մի մարդ կարողանայ նորա մէջ արձակ կերպով տեղաւորուիլ: Այդ արկղի վերայ մի քանի այլ և այլ ծանրութիւններ դարսելով ընկղմում են ջուրը, բայց կողմը դէպի վար: Ջրի մէջ իջնելու ժամանակը պարաններ կան զանգակի վերի կողմից ամրացրած, այդ պարաններից բռնում են, որ շատ արագութեամբ չէջնի զանգակը, յետոյ էլ այդ պարանովն են վեր քաշում զանգակը՝ երբ որ գործը վերջանում է: Զանգակի ներսը մի կողքի վերայ փոքրիկ նստարան կայ ամրացրած, նորա վերայ է նստում մարդը զանգակը իջնելու ժամանակ: Արկղի վերայ մանեղրումը մի քանի բացուածքներ կան, այդ բացուածքները հաստ հաստ ապակիներով են փակուած, որոնք պատուհանի պաշտօն են կատարում, պատճառ՝ նրանցով լոյս է թափանցում արկղի մէջ: Որովհետև օդը ընդդիմահարութիւն ունի, այդ պատճառով ջուրը չի կարողանում զանգակը բոլորովին լցնել, այդ պատճառով նորա մէջ բաւականին անջուր տարածութիւն է մնում, որտեղ օդով լիքը լինելով, սուզակը (մէջի եղած մարդը) կարողանում է աղատ շունչ քաշել: Բայց այդ օդը շուտով անպիտանանում է շնչառութեան համար, այդ պատճառով հարկաւոր է լինում նոր և մաքուր օդ հասցնել սուզակին: Դորա համար զանգակի վերևից ռեզինի խողովակներ կան ներս մտցրած, որոց վերին ծայրը դուրսն է և այն տեղից այդ խողովակների միջով առանձին գործիքների օգնութեամբ նոր օդ են մտցնում զանգակի մէջ:

Երբ ջրի տակին փոքր գործեր կան կատարելիք, օրինակի համար՝ շատ անգամ հարկաւոր է լինում գետերի տակից ջրմուղի խողովակներ դարսել կամ մի քանդուած բան վերանորոգել, այդ ժամանակ զանգակ չեն գործ դնում: Սուզակը այնպիսի հագուստ է հագնում, որ նորա ամեն մասերը սեմուած են մարմնոյ վերայ, և այնպիսի կտորից են կարուած, որ ջուրը չեն ծծում ներս, որով հեշտ է լինում սուզակի համար ձեռք ու ոտքը թեթևութեամբ շարժելու ջրի մէջ: Ծանր կօշիկներ է հագնում, որ ամուր կերպով կանգնէ ջրի տակին: Նորա շրջնքին ձգում են պղնձէ վզնոց, որ կարուած է շորերից: Գլխին հագցնում են մի պղնձէ գնտակ սաղաւարդի նման և այդ գնտակի ափերը ամրացնում են վզնոցի վերայ: Այդ գնտակը աչքերի ուղղութեամբ երկու բացուածք ունի հաստ ապակիներով փակած, և նրանց միջով լոյս է հասնում սուզակի աչքերին: Այսպէս ամեն բան այնպէս շինուած է, որ ոչ մի տեղից ջուր չի անցնում նորա մարմնոյ վերայ, մանաւանդ բերանի մօտ տեղերը: Պակասում է միայն օդը, երբ այդ էլ լինի, այնուհետև մարդը կարող է երկար ժամանակ ջրի տակ մնալ և կատարել հարկաւոր եղած գործը: Գնտակի վերի կող-

մից ձապուկ խողովակ կայ մոցրած, դորա մի ծայրը դուրսն է, դորա միջով ահա օդ են հասցնում սուզակին: Այս արհեստական կերպով ներս մոցրած օդը աւելի խիտ ու սեմուռած է լինում, քան թէ սուզակի մարմնի մէջ եղած օդը, այդ պատճառով այդպիսի օդը սկսում է ճնշել մարմնու վերայ և զանգակի մէջ եղած մարդը մեծ ցաւ է զգում աչքերումը, ականջներումը, կուրծքումը:

Օդի սեղմուելու վերայ է հիմնած և օդական հրացանների շինուածքը: Այդ տեսակ հրացանների ղնդադի մէջը դատարկ է լինում և չափաւոր միջնորդութեամբ հաղորդուած խողովակի հետ: Գնտակը դրսում են խողովակի մէջ, իսկ ղնդադի միջի օդը առանձին գործիքով են թանձրացնում: Երբ որ ջախմախը ղարկվում է, ղնդադի սեմուռած օդը մտնում է խողովակի մէջ և այնպիսի ուժով մղւում է գնտակին, որ նա վզղալով դուրս է նետվում: Այս տեսակ հրացաններից լաւ շինուածները՝ ոչ միայն վառօդի հրացանների պէս կարողանում են հեռու նետել գնտակը, այլ և ճնշուած օդին համեմատ, մէկ լցնելով շատ անգամ էլ կարող են ձգել:

(Շարունակելի)

ԴԱՎԻԹ ԱՂԱՅԵԱՆՑ

ԱԶԳԱՅԻՆ

ՀԻՆԳ ՈՐԴԵԳԻՐ

Նոր — Նախիջեւանարնակ մեր սիրելի եւ բարեպաշտ աղգայինք, — որք ազգօգուտ գործոց եւ ջանից մէջ նախընթաց հանդիսանալոյ փառքը ժառանգելոյ մրցմանց յաղթանակը վայելելոյ համար իւրեանց բարի նախանձը եւ ոգեվառ եռանդը յաւէտ արդեամբք հռչակած են, — Մայր Աթոռոյս նորակառոյց ձեմարանի շինուածեան աւարտման մերձ լինելն եւ սուղ միջոցում բացուելոյ պատրաստութիւնքը լսած, եւ մանաւանդ Վեհ. Հայրապետի հրաւիրանաց եւ յորդորանաց կոնդակէն շարժեալ եւ ոգեւորեալ, յատկապէս տեղւոյն համայն Հայաղնեայ հասարակութեան ի դիմաց կանոնադրեալ պատգամաւորներով, քաղ. վարչութեան խորհրդարանի անդամներով եւ ընդ նախագահութեամբ Գաղաթպղուխ Մեծ. Գէորգ Խոջայեանցի, Ընդհանուր ժողով կկազմեն, — ինչպէս յիշեալ Գաղաթպղուխն փութացել էր հաղորդել Վեհ. Հայրապետի մերում, — եւ օրինաւոր եղանակաւ տնօրինել են Ս. Էջմիածնի ձեմարանի մէջ հինգ որդեդրաց ծախքը տարեկան մի հազար հինգ հարիւր ռուբլի ամ ըստ ամէ նուիրել:

Ուստի Վեհ. Հայրապետ շնորհակալութեան եւ օրհնութեան կոնդակ ուղղեց:

Նոր — Նախիջեւանաբնակ մերազնեայց այսպիսի քաջաղ բարեգործութիւն արդարեւ արժանի է ինչպէս մեր, նոյնպէս համայն Ազգիս խորին շնորհակալութեանց, միանգամայն կանծկամք, զի նոցա սոյնպիսի վսեմ եւ եկեղեցաշէն գործ այլոց քաղաքաց եւ տեղեաց մերազնէից բարենախանձ օրինակ եւ խրախոյս ներգործէ, որպէս զի Վեհ. Հայրապետս մեր յաջողի ձեմարանի տարեկան ծախուց գոնէ կէսը Ազգայնոց նպաստիւք, եւ մնացեալն եւս այլ աղբիւրներէն ապահովել:

ԹԵՄ. ԴՊՐԱՆՈՑ ՅԱՍՏՐԱԽԱՆ

Աստրախանայ վիճակն մինչեւ ցարդ չունէր յատուկ Թեմական Դպրանոց, ուր Հայ մանկունք կարող լինէին ըստ արժանւոյն կատարելագործել մայրենի լեզուն եւ կարեւոր այլ դիտութիւնքը, եւ ի ժամանակին եկեղեցեաց համար արժանաւոր պաշտօնեայք պատրաստուիլ:

Գոհ եմք Գերապատիւ Առաջնորդ Գէորգ սրբազան Արքեպիսկոպոս Վեհապետեանցէն, որ խորին ուշադրութիւն դարձնելով Աստրախանայ եւ վիճակին այսպիսի զգալի, եւ կենսական անհրաժեշտ կարօտութեան, եւս ժողովրդեան բուռն եռանդէն եւ ջանքերէն ոգեւորեալ, Հոգեւոր դպրոցաց Հոգաբարձութեան հետ ի միասին կարեւոր պատրաստութիւնքը կտեսնեն Թեմ. Դպրանոց բանալոյ համար, եւ ներկայ ամսոյս

մէջ կարեւոր հրահանգները եւ ծրագիրը փոխանցել էին վեհ. Հայրապետի մերում ներկայացնել, զորս Նորին Սրբութիւն կոնդակաւն վաւերացնելով, վերադարձոյց, եւ անշուշտ եմք, զի սուղ միջոցում կբացուի թեմ. դպրանոց, եւ կանոնաւոր ընթացք կառնու եւ ազգօգուտ արդիւնք կընծայէ ի պայծառութիւն եկեղեցւոյ եւ ի յառաջադիմութիւն որդւոց Հայաստանեայց:

Յարմար ապի կունենամք ծրագրին ուսումնական եւ դրամական մասանց վերայ համառօտ տեղեկութիւն տալոյ:

ՆՈՒԷՐ ՄԵԾ. ՍԲՈՒՇՆԱՐԵԱՆՑԻ

Նոր — Նախիջեւանցի Մեծ. Առաքել Թորոսեան Թ. Սքուշնարեանց, երեք հարիւր ռուբլի ի նպաստ սլիտոյից ձեմարանի, եւ երկու հարիւր ռուբլի, Տպարանի Մայր Աթոռոյս, ամենն հինգ հարիւր ռուբլի նուիրեց:

Կգովեմք յիշեալ բարեպաշտ անձի եռանդը, հրապարակաւ շնորհակալութիւն մատուցանելով նմին:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ԵՒ ԵԼԵՒՄՈՒՏԻՒՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ԻՊԴԻՐԻ

Խմբագրութեան Ընթացք ամսագրոյս.

Իզմիրայ ծխական դպրոցի հոգաբարձուք, Պ. Աղաման Գանայեանց և Պ. Մինասն մահտեսի Ալահվերտեան անցեալ տարւոյս մէջ դպրոցի եւ լեմնական հաշուին ներկայացուցին հասարակութեան, ի ներկայութեան Հաշտարարական միջնորդ Պ. Նիկողայոս Ս. Սուլկունեանցի, նոյն հաշուեցուցակն հանդերձ անցեալ 1869, 1870 և 1871 ամաց ցուցակներովն, որոնք իսկութեամբ քաղել եմ՝ հոգաբարձութեան ժապաւենեալ տօմարից, ուղարկելով առ . . . խմբագրութիւնդ խնդրութեամբ, տեղի տալ ազգօգուտ ամսագրիդ մի անկիւնում, թէ հաշուեցուցակին և թէ իմ այս երկու տողին: Առ այժմ հասարակութիւն զբաղուած է նոր հոգաբարձուք և տեսուչ ընտրելով, և իրօք, յիշեալ հոգաբարձուք իրենց կարողութեան չափ աշխատում են պղրոցի պայծառութեան և յառաջադիմութեան համար, և այսօր, սովորութեն դպրոցում 50 ից աւելի աշակերտներ իրենց մայրենի լեզուով հետևեալ առարկաներ, Ազգային պատմութիւն, Աշխարհագրութիւն, Կրօնագիտութիւն, Թուաբանութիւն և Քերականութիւն. ուր էր, եթէ իւրաքանչիւր մեծ գիւղերի մէջ լինէին դպրոցներ, և Հայ մանկտին տղբր ի շատէ սովորելով, քիչ հասկացող և խորհող մարդ գառնար և ճանաչէր մարդկութիւն. . . . և իւր հասարակութեան օգուտներ, իր նախանձուն չի զոհէր:

Ա. Ց. ԱՐԱՄԵԱՆՑ

Իզմիրէ—ի

Յօգուտ հաստատեալ դպրոց և ելից պարագից:

Մուտք յընթացս 1869 ամի.	Ռ.	Կ.
Աշակերտատէրերից տարեկան վարձք.	138	
Հանգուցեալ Յովնէի Յովհաննէսեանի նուէր.	25	
Ջանազան անձինքներից նուէր.	5	80
Իզմիրցի ուսուցչաւորների նուէրը.	2	50
— Վաճառականութեան դնացողներից.	3	90
Աղաման Գանայեանցի ձեռամբ	22	
Մահտեսի Աղաման ձեռամբ.	7	
Իզմիրայ Մասաց ընկերութիւնից.	49	
Պ. Սամուէլեան նուիրից.	5	
Գումարն է	258	20

Եկ յընթացս 1869 ամի.		
Հայերէն ուսուցչին վարձքը.	48	
Ամայեակ Վարդապետին տուաւ	41	33
Ռուսերէն ուսուցչին վարձքը	100	13
Աշխարհագրութեան տախտակներին	13	10
Գրասեղանների և միւս պիտոյից համար	63	35
Գումարն է	265	91

Մուտք յընթացս 1870 ամի.		
Պ. Մարտիրոս Դաւրիշեանց նուիրից.	10	
Պ. Խուաս Սողոմոնեանց նուիրից.	5	
Աշակերտներից տարեկան վարձք.	63	

Հարսանիք անողներից նուէր.	.	31 79
Զանազան անձինքներից նուէր.	.	4 17
Գինեվաճառութեան արդիւնք Յովհաննէս մահտեսի Խաչատրեանից.	.	16
Գումարն է		129 96

Եւ 1870 ամի

Հայերէն Ուսուցչի վարձք.	. .	61 10
Ռուսերէն Ուսուցչի վարձք.	. .	85
Վառելիք և միւս ծախսերին.	. .	18
Գումարն է		164 10

Մուտք յընդհանուր 1871 ամի.

Պ. Գրիգոր Տ. Թումասեան նուիրեց.		11 97
Պ. Յովակիմ Բաղիշեցի նուիրեց.	.	2 70
Հարսանիք անողներից նուէր.	. .	2 74
Կշռարդի արդիւնք.	. . .	152
Մաամաճառութեան արդիւնք.	.	130
Գինեվաճառութեան ,,	. .	36
Աշակերտատերերից տարեկան վարձք	.	90 50
Գումարն է		425 91

Եւ 1871 ամի.

Հայերէն Ուսուցչի վարձք.	. .	45
Ռուսերէն Ուսուցչի վարձք.	.	68
Մանկավարժին տուաւ.	. .	8
Վառելիքի և միւս ծախսից.	.	5
Գումարն է		126

Մուտք յընդհանուր 1872 ամի.

Տանուտէր Իզմիրայ Հասարակութեան Գրիգոր Շահինեանն նուիրեց.	.	2
Աղախան Գանայեանց նուիրեց.	.	2
Պ Լէոն Ոստանիկ Տէր Յարութիւնեանց նուիրեց.	. .	6 15
Պ. Գրիգոր տէր Թումասեանց նուիրեց.		4
Հարսանիք անողների նուէրը.	.	9 52
Աշակերտատերէրից տարեկան վարձք.		136 90
Կշռարդի արդիւնք.	. . .	103
Մաամաճառութեան արդիւնք.	.	123
Գինեվաճառութեան ,,	.	48
Մանուածոր տոկոս դրամից.	.	20
Գումարն է		454 57

Եւ 1872 ամի.

Հայերէն Ուսուցչի վարձք.	.	60
Մանկավարժի վարձք	. .	42
Գնեցաւ կշռարդ.	. .	80
Ծախս եղև.	. .	62
Գումարն է		182 62

Բոլոր մտից գումարն է . . 1268 Րբլ. 64 Կ.
Բոլոր ծախուց գումարն է . . 738 Րբլ. 63 Կ.

Բառնալով ելքն ի մտից մնաց 530 Րբլ. և 1 կոպէկ, առ մնին Յունվարի 1873 ամի.

Հոգաբարձուք
Աղախան Գանայեանց
Մինաս Մահտեսի Ալահվերտեան

ՏՆՕՈՒԹԻՒՆ ՍՂՆԱԽԻ Ս. ՍԱՀԱԿԵԱՆ ՀՕԳԵՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ.

(Ը. ԲՈՒԼԻՆ ՆԱԽԱԳԱՀ.)

Ուստի ստանալով բողոքագիր Սղնախաբնակ հայազն հասարակութիւնից տեղւոյն Սուրբ Սահակեան Հոգևոր Ուսումնարանի ողբալի դրութեան մասին, վերհափառ Ամենողիկոսը բարեհաճեցաւ հրամայել ինձ՝ ի ձեռն Սիւնեաց սրբոյ Էջմիածնի՝ փութալ անյապաղ ի Սղնախ և ամենայն անաչառութեամբ վերահաստատիւն դործել նոյն ուսումնարանի ներքին և արտաքին կառավարութեան վերայ։ Երբ յայտարարութեամբ մատուցի վերահաստատեանս հետևանքները, Նորին Օծութիւնը՝ ցաւելով Սղնախի ուսումնարանի անբարեկարգ դրութեան վերայ և յիշելով Սրբազան առաքելոյ այն խօսքերը թէ՝ ,, Իսկ որ վերանկանն՝ առաքէ ամենեցուն յանդիմանեա՝ զի և այլքն երկեղցեն,, ՝ թոյլատրից ինձ հրատարակել քննութեան համառօտ պատկերը, որպէս զի մի կողմից Սղնախի Հայ հասարակութիւնը հանգստանայ՝ իմանալով որ ի զուր չէ անցել իւր բողոքը, իսկ միւս կողմից Ս. Սահակեան ուսումնարանի վարչութիւնը միամտանայ՝ տեսնելով որ քննիչը հաստատել է իւր

բոլոր վերահասուելիւնը ոչ թէ զբպարտուելեանց և թշնամական չարախօսուելեանց վերայ, այլ ճըշգրիտ փաստերի վերայ, այն է՝ ուսումնական և տնտեսական կառավարուելեան մատեանների և գրաւոր ապացոյցների վերայ։

Սղնախի սուրբ Սահակեան ուսումնարանը (տըղայոց) հաստատած է Հանդուցեալ Մատթէոս կաթողիկոսի կոնդակով 1860 թուին և պահպանուում է Սղնախի և Նորա վիճակի մոմավաճառութեան և ուխտատեղեաց արդիւնքներով և որոշած տարեկան օժանդակութիւնով 120 ռուբլի արծաթ սուրբ Կարապետ եկեղեցուց և Նոյնչափ սուրբ Գէորգ եկեղեցուց տեղւոյն։ Այս արդիւնքներից գոյանում է տարեկան մուտք միջին թուով մինչև 2000 ռ. (ինչպէս կտեսնենք յետոյ)։ Բացի սորանից՝ առանձին նուիրաբերութեան մատեանից երևում է որ ուսումնարանի հաստատութեան ըսկզբում ազգասէր և ուսումնասէր մարդիկ նուիրել են յօգուտ նորին մինչև 10 000 ռ. խոստանալով հատուցանել բոլոր գումարը հինգ տարի ժամանակում և հատուցել են առաջին տարւոյ համար 1023 ռ։ Նոյն միջոցներին բարեպաշտ Սօսի Լիանոզեանցը նուիրել է ուսումնարանին միանուագ 1000 ռ. ի յիշատակ իւր հանդուցեալ որդւոյ, ընդ ամէն՝ 2023 ռ. 1)։

Թէպէտ ահա այսպիսի հաստատուն և յարատև աղբիւրները ապահովացնում են ուսումնարանի պահպանողութիւնը, սակայն սա՝ իւր ծննդեան օրից չունենալով կանոնաւոր կառավարութիւն թէ՛ ըստ տնտեսական և թէ՛ ըստ ուսումնական մասին՝ փոխանակ յառաջադիմութեան և ծաղկման ցուցել է միշտ յետադիմութիւն և ապարդիւնաւորութիւն, իսկ ներկայ հոգաբարձուների, տեսչի և վարժապետների օրով հասել է նա միանգամայն խանգարեալ դրութեան։

Ահա և ապացոյցներ։

---

1) Ազգասէր և բարեպաշտ նուիրատուները, տեսնելով ուսումնարանի պէսպէս անկարգութիւնները և հոգաբարձաց անբարեմտութիւնը և անհոգատարութիւնը դադրեցրել են խոստացած գումարի հատուցումն։ Նոյն իսկ նուիրած 2023 ռ. անհետացած է այժմ։

Մի ուսումնարանի յառաջադիմութիւնը ըստ ուսումնական մասին նախ և առաջ և գլխաւորապէս կախուած է տեսչի կառավարութիւնից, ե՛թէ ունի նա օրինաւոր պատրաստութիւն և ադրիաբանութիւն։ Իսկ Սղնախի ուսումնարանի տեսուչը՝ Պ. Սարգիս Եղիազարեանց՝ Տփղիսի կլասիքական գիմնազիայի ուսումը կիսատ թողած լինելով՝ ուսոի և չունենալով արժանաւոր պատրաստութիւն վարել տեսչական բարձր պաշտօնը և բոլորովին անտեղեակ լինելով թէ ի՞նչ է մանկավարժութիւնը և ինչ եղանակով պէտք է կառավարել ուսումնարանը, իւր անկմտութեամբ և մանաւանդ աննկրելի անհոգութեամբ վեց տարու ընթացքում (1866 թուի Հոկտեմբերի 3 ից մինչև այսօր) հասցրել է ուսումնարանը իւր անկման կետին։

Զպահելով աշակերտների ընդունելութեան և արձակման մատեանները՝ տեսուչը չգիտէր թէ իւրաքանչիւր աշակերտ քանի՞ տարի է մնում ուսումնարանում, ուստի դժուարին էր որոշել աշակերտների յառաջադիմութեան աստիճանը ըստ ժամանակի։

Ձտալով ուսումնարանին կանոնաւոր ընթացք՝ տեսուչը յառաջացրել էր մի մեծ և տարօրինակ անյարմարութիւն-պատրաստական դասատան մէջ եղել են միշտ 50—70 աշակերտք, իսկ առաջինում 9—8, երբեմն մինչև անգամ 4 և 3։

Պարտաւոր լինելով տեսչական պաշտօնի հետ միասին ուսուցանել և Ռուսաց լեզու, Թուաբանութիւն և Աշխարհագրութիւն, Պ. Եղիազարեանցը ըստ իւր վկայութեան դադարացրել է Աշխարհագրութեան դասախօսութիւնը վերջին երեք տարին, բայց մատեանների մէջ նշանակած են և նոյն առարկայի դասերը և շատ տեղ ստորագրած իբր նղած։

Տեսուչը՝ իբրև վարժապետ յաճախ բաց թողնելով դասերը, չէ պահանջել և միւս վարժապետներից արիաբանութիւնը, ուստի և նորա հետևել են նորա օրինակին, ինչպէս կտեսնենք յետոյ, իսկ Պ. Ըրշակ Տէր Ստեփանեանցն՝ իբրև վարժապետ Հայկական լեզուի, վանկագրութեան, երգեցողութեան և ազգային պատմութեան, դադարացրել է այս վերջին առարկայի դասատուութիւնը երկու տարու ընթացքում։

Հոգաբարձուները, թէպէտև շատ անփոյթ գէպ ի ուսումնարանի ընդհանուր կառավարութիւնը, նկատելով որ ինքը տեսուչը և միւս վարժապետները շատ դասեր են կորցնում՝ և տեսնելով որ ըստ մեծի մասին շատ ուշ են մանում՝ նոքա դասատուն և շատ շուտով են դարս գալի այնտեղից՝ իրենց գրութեամբ ի 17 փետր. 1869 համար 1 (ՀԲ-ից ԼԲ-ում) յիշեցնումն տեսչին իր պարտաւորութիւնը և առաջարկում լինել արթուն և արիաջան։ Բայց վարժապետները շատունակել են վարուել իրենց ծուլութեան կանոնով։

Ահա և ցուցակ բացակայութեան վարժապետաց։

	Բացակայութիւնը վարժապետաց։ Թիւ դասերի։		
	Պատ. հիւանդ.	Առանց պատ.	Գումար.
Ա. մասեան № 7 ներկայութեան եւ բացակայութեան վարժապետաց ի 5 հոկտեմբերի 1866 թ. մինչեւ 5 յունիսի 1867 թ.			
1. Սարգիս Եղիազարեանց (տեսուչ) ուսուցիչ առաջաց լեզուի եւ քնաբանութեան եւ աշխարհագրութեան. . .	8	19	27
2. Արշակ Տէր Ստեփանեանց, ուսուցիչ Հայոց լեզուի, Հայոց պատմութեան, վայելչագրութեան եւ երգեցողութեան. . .		9	9
3. Աբէլ Սուքիասեանց, ուսուցիչ քնաբանութեան եւ վայելչագրութեանց. .	5	6	9
4. Տէր Սարգիս Տէր Ստեփանեանց, ուսուցիչ կրօնագիտութեան եւ Հայոց վայելչագրութեան.	11	28	39
			84
Բ. մասեան № 9 ի 3 Սեպտ. 1867 թ. ցց 8 յունիսի 1868 թ.			
1. Սարգիս Եղիազարեանց. . .	15	35	66
2. Արշակ Տէր Ստեփանեանց. .	8	5 69	82
3. Աբէլ Սուքիասեանց. . .	2	10 50	62
4. Տէր Սարգիս Տէր Ստեփանեանց.	1	50 77	108
			318
Գ. մասեան № 10 ի 30 Սեպտ. 1868 ամի մինչեւ 7 յունիսի 1869 ամի։			
1. Սարգիս Եղիազարեանց. . .	4	65	69
2. Արշակ Տէր Ստեփանեանց. .	2	6 78	86
3. Տէր Սարգիս Տէր Ստեփանեանց.		1 89	90
			245

Դաւճար. 1. Ըստման սկզբից մինչեւ 1869 թ. մարտի 8ը հինգ ամսից աւելի ժամանակ դադարած են եղել երկոք դասատան մէջ քնաբանութեան եւ ուսուց վայելչագրութեան դասատուութիւնը, քանի թէ վարժապետ չունենալու պատճառով, ուստի կորած են 205 դաս. յետոյ քնաբանութիւնը շարունակել է տեսուչ եղիազարեանցը, իսկ վայելչագրութիւնը Արշակ Տէր Ստեփանեանցը, բաժանելով իւրեանց մէջ նոյն առնչակաների ուսուցչի ռոճիկը։

Դաւճար. 2. Ապրիլի 7, 8, 9, 10, 11, 12, 28, 29, 30 եւ 31 ին, եւ Մայիսի 1, 2 եւ 3-ին երկու դասատուն մէջ սէաք է լիներ 104 դաս, բայց եղել է միայն 12, կէսը կրօնագիտութեան եւ կէսը Հայոց վայելչագրութեան, եւ 1 դաս Հայոց լեզուի. իսկ ապրիլի 12, 28 եւ 29 ամենեին չէ եղել դասատուութիւնը բոլոր վարժապետների չգալու պատճառով։

Դ. մասեան № 6 ի 8 Սեպտ. 1869 ամի մինչեւ 30 Մայիսի 1870 ամի։

1. Սարգիս Եղիազարեանց. . .		65	65
Դաւճար. Այս տեղից սկսած եղիազարեանցը դադարացրել է աշխարհագրութեան դասատուութիւնը։			
2. Արշակ Տէր Ստեփանեանց. . .	40	5	45
3. Տէր Սարգիս Տէր Ստեփանեանց. .	2	52	54
			152
Ե. մասեան № 8 ի 28 Հոկտ. 1870 ամի մինչեւ 24 Սեպտ. 1871 ամի։			
1. Սարգիս Եղիազարեանց. . .		9	9
2. Արշակ Տէր Ստեփանեանց. .	1	22	23
3. Տէր Սարգիս Տէր Ստեփանեանց. .		54	54
			86
Զ. մասեան № 11 ի 15 Սեպտ. 1871 ամի մինչեւ 12 փետր. 1872 ամի։			
1. Սարգիս Եղիազարեանց. . .		9 4	13
2. Արշակ Տէր Ստեփանեանց. .		32 14	46
3. Տէր Սարգիս Տէր Ստեփանեանց.	10	3 14	27
			86
Ընդհանուր գումար			1136

Տեսչի և վարժապետների այս տեսակ չափազանց ծուլութիւնից և անհոգատարութիւնից զարգացել է զարմանալի ծուլութիւն և աշակերտների մէջ։

Ահա ցուցակ բացակայութեան աշակերտաց։

Ա. մասեան աշակերտաց յառաջադիմութեան ի 5 հոկտ. 1866 ամի մինչեւ Մայիսի վերջը 1867 ամի։	Թիւ դասերի։
1. Պատրաստական դասատան մէջ. . .	4558
2. Առաջնի մէջ (նախ 8, յետոյ 5 եւ յետոյ 5 աշակերտ).	459
	4797
Բ. մասեան ի 4 Սեպտ. 1867 ամի մինչեւ 18 Մայիսի 1868 ամի։	
1. Պատրաստական դասատան մէջ. .	5530
2. Առաջնի մէջ (նախ 8, յետոյ 6 եւ յետոյ 3 աշակերտ).	577
	6107
Գ. մասեան ի 30 Սեպտ. 1868 թ. մինչեւ վերջ Մայիսի 1869 ամի։	
1. Պատրաստականում.	1439
2. Առաջնում (նախ 9 եւ յետոյ 8 աշակերտ). .	655
	2094
Դ. մասեան ի 22 Սեպտ. 1869 ամի մինչեւ 25 Մայիսի 1870։	
1. Պատրաստական դասատանում. . .	809
2. Առաջնում (նախ 5 եւ յետոյ 4 աշակերտ). .	157
	966
Ե. մասեան ի 28 Սեպտ. 1870 ամի մինչեւ 24 Ապրիլի 1871 ամի։	
1. Պատրաստական դասատանում. . .	1085
2. Առաջնում (միայն 5 աշակերտ). . .	151
	1256
Զ. մասեան ի 15 Սեպտ. 1871 ամի մինչեւ 5 Ապրիլի 1872 ամի։	
1. Պատրաստական դասատան մէջ. .	269
2. Առաջնում (նախ 5 եւ յետոյ 4 աշակերտ). .	68
	337
Ընդհանուր գումար	15357

Առանձին առանձին աշակերտներից ոմանք բաց են թողել մի տարուայ մէջ 200, 250, 300 եւ աւելի դաս։

Ի հարկէ՝ մի ուսումնարանի մէջ, ուր վարժապետները յայժ յաճախ բացակայ են գտանւում դասախօսութիւնից և աշակերտները հետևւում են վարժապետների օրինակին, չէ կարող ծաղկիլ ուսումն և յառաջադիմութիւնը։ Մի ամբողջ ամիս

ամենայն օր ներկայ գտանուելով Սղնախի ուսումնարանում դասերի ժամանակ՝ անձամբ անձին ստուգեցի որ արդարև աշակերտները շատ ջուրկ էին յառաջադիմութիւնից ոչ միայն արտաքին առարկաների մէջ, այլ մանաւանդ մայրենի լեզուի և կրօնապիտութեան մէջ։ Մի տարի սովորող աշակերտները հազիւ կարդալուց յետոյ ղրկուած էին հայրերն և ասերէն ընթերցանութեան վանկերը։ Երկու տարի սովորողները հազիւ կարողանում էին վարժ կարդալ։ Երեք տարի սովորողները թէև վարժ կարդում էին, բայց չէին հասկանում կարդացածը և աշխարհաբար ոճով գրած թեթև պատմութիւնները երկու երեք անգամ կարդալուց յետոյ ղժուարանում էին պատմել իւրեանց խօսքերով։ Հոգս և հինգ տարի սովորողները հազիւ կարողանում էին թարգմանել աւետարանը գրաբարից աշխարհաբար և ամենևին ծանօթ չէին քերականութեան հետ։ Ուսից լեզուի մէջ առաւել ևս նուազ էին աշակերտները։ Թուաբանութեան մէջ նմանապէս. միայն 4—5 աշակերտ հազիւ գիտէին անսխալ կատարել առաջին չորս գործողութիւնը, բայց չէին կարողանում բացատրել պատճառները թէ ի՞նչու այսպէս էին վարուում կամ այնպէս։ Աշխարհագրութիւնը և Հայոց պատմութիւնը խափանուած են վերջին երկու երեք տարին, ինչպէս վերը յիշեցինք։ Եկեղեցական երգեցողութիւնը եղել է միայն լոկ անուամբ, և աշակերտները ոչ միայն երբեք չեն երգել եկեղեցում կիրակի և մեծ տօն օրերը, այլ սովորութիւն չէ եղել տանել նոցա եկեղեցի, որով մանաւանդ շարժուած է եղել ժողովրդի տրտունջը։ Վայելչագրութիւնները գրտանուում էին միւս առարկաների վիճակի մէջ։

Ահա և ապացոյցներ անյառաջադիմութեան ուսումնարանի, քաղած աշակերտների յառաջադիմութեան մատեաններից։

Աշակերտների յառաջադիմութեան թուանշանների դումարները, ուսանց հաշուելոյ վայելչագրութիւնների և երգեցողութեան թուանշանները։

	Ա. վասն 1866 եւ 1867 ամի։	Բ. վասն 1867-68 ամի։	Գ. վասն 1867-69 ամի։	Դ. վասն 1869-70 ամի։	Ե. վասն 1870-71 ամի։	Զ. վասն 1871-72 ամի։
Բոլոր աշակերտները ի միասին։	0 1 2 3 4 5	45 291 1539 1036 269 117	24 163 605 342 39 3	56 64 280 278 190 54	17 36 116 115 55 մի.	14 45 221 122 6 մի
1. Պատրաստական դասատան.	37 526 4507 5056 1262 444	54 44 235 302 196 15	56 64 280 278 190 54	9 40 408 85 7 2	4 7 48 157 42 մի.	31 53 179 230 101 2
2. Առաջին դասատան (նախ 9 եւ յետոյ 8 աշակերտ)	9 25 65 150 153 95	99 535 1574 1538 465 152	80 257 885 620 249 59	26 76 524 200 42 2	21 156 462 486 40	45 98 400 552 107 2
(նախ 8 յետոյ 5 եւ յետոյ 5 աշակերտ)	46 549 4570 5166 1415 539					

Հաշուի մէջ չեն մտած այն աշակերտները, որք վանկեր են կապում, որովհետև նորա չունին թուանշաններ։

Զննելով վերոյգրեալ ցուցակը՝ նկատումենք որ 2 թուանշանի գումարը ամենայն տարի առաւել է միւսներից, և թէ 5 թուանշանի գումարը հետզհետէ նուազում է և բոլորովին սպառում, որով պարզ երևում է թէ օրըստ յառաջիմութեան ճանապարհի վերայ մտած է ուսումնարանը վեց տարու ընթացքում։

Այստեղ հարկաւոր է աւելացնել որ վարժապետները կատարում էին դասախօսութիւնը հին, դժուարին և մեռին եղանակով, շատ անգամ բաց թողնելով կարևոր բացատրութիւնները և աւելի շատ անգամ ծանրաբեռնելով աշակերտների միտքը աւելորդաբանութիւնով։ Նոցա, որպէս և տեսչի, նոյն իսկ վարքը աշակերտների հետ չէր մանկավարժական, համեստ և մեղմ, այլ խիստ և կոպիտ, երբեմն ապտակներ տալով, երբեմն մազերը քաշկռտելով, երբեմն ծանր խօսքեր ասելով և յոյժ յաճախ հրաժարեցնելով։

Սղնախի ուսումնարանի զարմանալի յետադիմութիւնը և ապարդիւնաւորութիւնը ըստ ուսումնական մասին յառաջացել է ի հարկէ հոգաբարձուների անհոգատարութիւնից, որք նոյնպիսի անփութութեամբ կառավարել են և տնտեսական մասն։ Ներկայ հոգաբարձուների հաստատութիւնից յետոյ միայն նոցանից՝ Պ. Սարգսեանց՝ հազիւ մի ամիս անցուցած հրաժարուեմ պաշտօնից և գնում Պետերբուրգ։ Միւս հոգա-

բարձուն՝ Պ. Գրիգոր Ճաբուրեանց՝ ինչպէս ինքը իւր բերանով վկայեց մի քանի անգամ շատ մարդոց առաջև, չորս տարու ընթացքում մեկ է ուսումնարանի մէջ միայն վեց կամ եօթն անգամ, և այն վիճակաւոր Առաջնորդին, Բարձն Նիկողայոս և այլ երևելի անձինքների ուսումնարան գնալու պատճառով։

Երրորդ Հոգաբարձուն՝ Պ. Մարդար Սահակեանց ճնալով միայնակ կառավարել է ուսումնարանի տնտեսական մասն անկանոն եղանակով։ Փոխանակ ժապաւենեալ և կնքեալ մատեանների ես տեսայ մի քանի տետրակներ երկու երեք թերթից կազած, և մի քանի մատեաններ, որը վրացերէն, որը Հայերէն, մուրը և ծախքը խառնած. նոցա մէջ ոչ թէ միայն նշմարուումէր զարմանալի անկարգութիւն և խանգարումն հաշուակալութեան կանոնների, այլ մուրքի և ծախքի շատ յօդուածները բնաւականին տարակուսելի էին։ Զօրօրինակ. Նաստմեար ուխտատեղու և Սղնախի տուրք Աստուածածնի մատրան արդիւնքները շատ նուազ են, այնինչ երկուքը ևս երևելի ուխտատեղիք են. Սղնախի և Նորա վիճակի եկեղեցիներու մէջ չօգուտ ուսումնարանի եղած տուփերը (գանձանակները) միշտ բացած են առանց ներկայութեան և տօրտզրութեան երեսփոխանի, քահանայի կամ ժամկոչի. Միս կողմից ծախսերը կատարուած են առանց խնայողութեան, որը նշմարուէր մանաւանդ տեսչի և վարժապետների ռոճիկների մէջ, որը ամենևին չեն համապատասխանում մի ծխական դպրոցի դրութեան։ Տեսուչը՝ պարտաւոր լինելով ուսուցանել նաև ռազց լեզու, թուաբանութիւն և աշխարհագրութիւն (թէպէտ վերջին երեք տարի խափանել է այս առարկայի դասատուութիւնը) և ունենալով շաբաթը 17 դաս (բոլոր առարկաների համար) ըստանում է տարեկան ռոճիկ 500 ռուբլի, քնակարան (երկու սենեակ, երկու նախասենեակ և մի խոհանոց), փայտ, ջուր և ծառայ, որը իբր ուսումնարանի պահպան յատկապէս ծառայում նորան։ Վարժապետը հայերէն լեզուի, հայոց և ռուսաց վարչագրութեան, երգեցողութեան և ազգային պատմութեան (թէպէտ երևի տեսչի օրինակին հետևելով՝ դադարեցրել է այս առարկայի դասախօսութիւնը վերջին երկու տարին), և ունենալով շաբաթը 21 դաս (բոլոր առարկաների համար) ստանում տարեկան ռոճիկ 400 ռուբլի։ Վարժապետը կրօնագիտութեան և հայոց վարչագրութեան ունենալով շաբաթը 8 դաս՝ ստանում տարեկան ռոճիկ 120 ռուբլի։ Վիճակաւոր Առաջնորդը՝ նկատելով որ այս ռոճիկները ամենևին չեն համապատասխանում ուսումնարանի նիւթաւոր կարողութեան առանձին հրամանագրութիւնով պատուիրել է հոգաբարձուներին տալ տեսչին 400 ռ., կրօնագիտութեան վարժապետին 120 ռ. իսկ երրորդ վարժապետին 300 ռ. բայց ոչ թէ միայն Առաջնորդի հրամանը մինչև այսօր մնացել է անկատար, այլ հոգաբարձուն ստիպուելիւն չին ունեցել իւրաքանչիւր կորցրած դասի համար տուգանք պահանջել գոնէ 50 կոպէկ, որով չորս հինգ տարու միջոցում ի զուր չէր կորչի 5-6 հարիւր ռուբլին։

Ընդ հակառակն, ուրիշ այլ մանր և հարկաւոր բաների համար ժլատութիւն է ցոյց տուած. տեսուչը և վարժապետները միաբերան վկայեցին, թէ փայտ չունենալու պատճառով շատ անգամ խափանել են ուսումը. ցրտից սառչուած, թէպէտ ծախսարարական մատեանների մէջ երևումն բաւականին ծախսեր փայտի վերայ։ Վերջապէս, թէպէտ մատեանների մէջ մի առ մի ցոյց տուած են ուսումնարանի բոլոր ծախսերը՝ ռոճիկները, փայտը, ջուրը, տան կարկատանքը ևլն, բայց նոցա մէջ կան և մի այլ տեսակ ծախք «ոռոմ. նաբանին վճռաբեբեալ այլ և այլ ծախսեր», անունով, այս տեսակ ծախսերը իւրաքանչիւր տարի հասնումեն մինչև 100 ռ։

Ահա և համառօտ ցուցակ եկամուտի և ծախսերի։

		Մուրք.	
		ր.	կ.
Ի 1 Յուլիսի 1868 ամի մնձեւ 1 Հոկտեմբերի 1872 ամի։			
Ա. Ստացած նախկին հոգաբարձութիւնից			
1868	Թուի Յունիսի 1-ին մնացել եւ փոխով. . .	448	42 կէս
Բ. Մուծամատեանութիւնից։			
1868	Թուին (Յուլիսի 1-ից սկսած). . . .	653	52
1869	Թուին.	1595	17 կէս
1870	—	1655	64 կէս
1871	—	2681	88
1872	— (մինչեւ Հոկտ. 1-ն)	734	81 կէս
		7146	86 կէս
Գ. Ս. դպրապետ եւ Ս. Գէորգ եկեղեցիներից։			
1868	Թուին.	240	
1869	—	240	
1870	—	240	
1871	—	240	
1872	—	240	
		1200	

Դ. Տիերից (դանձանակներից):		
1868 Թուին	15	55
1869 —	44	80
1870 —	64	86
1871 —	41	75
1872 —	31	50
	198	26
Ե. Այլ եւ այլ մուտք:		
1868 Թուին	4	20
1869 —	27	50
1870 —	25	70
1871 —	27	75
1872 —	88	50
	168	65
Ընդհանուր գումար	9152	20

Ծախք.

Ի 1 Յուլիսի 1868 ամի մինչեւ 1 Հոկտ. 1872 ամի:

	Ռ.	Կ.
Ա. Ռոճիկներ տեսչին, վարժապետներին եւ ծառ.		
1868 Թուին (Յուլիսի 1-ից)	440	
1869 —	1016	67
1870 —	1058	
1871 —	1090	
1872 — (մինչեւ 1-ն Հոկտեմբերի)	814	
	4598	67
Բ. Այլ եւ այլ ծախք ուսումն. փայտ ջուր եւլն):		
1868 (Յուլիսի 1-ից)	74	5
1869 —	75	12 կէս
1870 —	68	67 կէս
1871 —	242	25
1872 —	24	59
	434	69
Դ. Ծախք Նաւտիլուրու եկեղեցւոյ, Սղնախի Ս. Աստուածածի մատրան եւ Սղնախի մանաւանառաւութեան կրպակի վերայ (վարձ մոմ ծախսներին, ժամկոչին, մոմիքափողին եւայլն):		
1869 Թուին	22	5
1870 —	436	55
1871 —	240	89
1872 —	130	15
	829	44
Դ. Առնուել է մոմ:		
1868 Թուին Յուլիսի 1-ից	565	40
1869 —	722	55
1870 —	728	12 կէս
1871 —	1575	86
1872 —	460	70
	5550	61
Ընդհանուր գումար	9053	41

Ահա այս տասն հազարի չափ գումարը կորիլ է ի զուր, միանգամայն ապարդիւն, որովհետեւ ուսումնարանը փոխանակ յառաջադիմելեան զընացիլ է յետադիմելեան ճանապարհի վերայ արագ արագ քայլերով:

Երեւի թէ լաւ սահմանին է հաստատուիլ Սղնախի ուսումնարանը, որովհետեւ կորցրել է ոչ թէ յառաջադիմելիւնը եւ տնտեսական իմանալութիւնը, այլ եւ ուսումնարանավայել արտաքին կերպարանքը: Շինուելիւնը միանգամայն քայքայուած է ներսից եւ դրսից. առաստաղների տախտակները փտել են եւ ծռուիլ եւ սպառնում վազը միւս օրը փլչիլ. դռները եւ պատուհանները խախտուած, տանիքի կղմինդրները կոտրատած եւ թափած եւ անձրեւի ջուրը հեղեղի պէս մտնում ներս եւ գոյացնում գրեթէ ընչպէս պատահեցաւ իմ ժամանակ. երկու երեք անգամ: Վիճակային Առաջնորդը իւր գրութեամբ ի 1 Ապր. 1866 ամի №81 պատուիրել էր սուրբ Կարապետ եկեղեցւոյ երիցփոխան Յովսէփ Ամիրխանեանցին նորոգել ուսումնարանի սենեակները, որովհետեւ նոքա պատկանումեն նոյն եկեղեցուն. բայց Պ. Ամիրխանեանցը թողել էր Առաջնորդի հրամանը անկատար մինչեւ Հոկտեմբերը 1869 թուի. Այդ միջոցին հոգաբարձուները առաջարկութիւն են ստանում գործակատարից ի 24 Հոկտ. 1969 ամի №187 նորոգել ուսումնարանը Առաջնորդի գալու պատճառով. ուստի նոքա գրով ի 29 նոյն ամի №4 խնդրումեն երեսփոխանին նորոգել ուսումնարանը հմուտ գործակատարի առաջարկութեան և Առաջնորդի նախընթաց հրամանագրութեան: Բայց Պ. Ամիրխանեանցը գրով ի 15 նոյեմբ նոյն թուի №10 պատասխանումէ նոցա թէ մեծ մեծ ծախսեր ունենալով նոյն եկեղեցու զանգակատան շինութեան վերայ՝ չէ կարող նորոգել ուսումնարանը և առաջարկումէ նոցան նորոգել այն ուսումնարանի արդիւնքներով մինչեւ որ Առաջնորդը կանէ մի այլ տնօրէնութիւն: Հոգաբարձուները խնդրագրով ի 11 նոյն ամի և թուի №5 բողոքումեն առաջնորդին երիցփոխանի կամակորութեան վերայ և խնդրումեն առնել արժանաւոր տնօրէնութիւն: Առաջնորդը երկրորդ գրութիւնով ի 9 Յունվ. 1870 թուի, №3 պատուիրումէ հոգաբարձուներին և երիցփոխանին՝ «ամենևին չբաժանել ու-
«սումնարանը եկեղեցուց և եթէ կարելի է առաջ
«ուսումնարանի թերութիւնները հեռացնել և
«յետոյ եկեղեցւոյ. որովհետև ուսումնարանը
«շինածը սուրբ Սահակ Պարթեւ մեծ Հայրապետի
«անունով՝ լինելով բոլորովին հնացած ապա-
«տաղումդներում և լուսամուտներում, չէ կա-
«րող պարծանքով կրել իւր ճակատի վերայ սուրբ
«Հայրապետի անունը, ուրեմն մեր սիրելիք շտա-
«պեցէք միեւնոյն օրինակութեամբ տպահովաց-
«նել սուրբ Սահակեան ուսումնարանի վիճակը
«ամենայն կողմից համաձայն մեր առաջին գրու-
«թեան ի 1 ապր. 1866 թուի №81 և մեր պա-
«տուիրանքի կատարման հետեւանքները հաղոր-
«դել մեզ ձեր համախոհական ծանուցագրով և
«միխիթարել մեր վշտացած սիրտը»: Առաջնորդը երեք տարի ապառնում միխիթարութեան: Հոգա-

բարձունքները և երեսփոխանը դեռ չեն գտել Հաճմախոյ, ուստի Առաջնորդի Հրամանը մինչև այսօր մնում անկատար, իսկ ուսումնարանի շինութիւնը այնչափ վեսատել է և խանգարուել, որ մի տարուց յետոյ անկարելի կլինի շարունակել նորա մէջ ուսումը։

Տեսնելով ուսումնարանի այսպիսի խեղճ դրութիւնը և ի նկատի ունենալով Առաջնորդի երկու հրամանագրութիւնը, ես առաձին դրութիւնով ի 23 սեպտ. անցեալ 1872 ամի № 1 առաջարկեցի երեցփոխան Յովսէփ Ամիրխանեանցին կատարել դռներս մանուածոյ կարկատանքը փոխելով տանիքի վերայ կոտրատած կղմինդրները որ խափանուի անձրևի ջրի կաթիլը։ Իբր կատարելով իմ առաջարկութիւնը՝ պ. Ամիրխանեանցը տնօրինել էր փոխել 20-40 կղմինդր, այն ինչ հարկաւոր էր փոխել 1000 և աւելի հատ։

Սինօդն Ս. Էջմիածնի իմանալով իմ յայտարարութիւնից Սղնախի սուրբ Սահակեան ուսումնարանի ողբալի դրութիւնը՝ ունի շուտով առնել արժանաւոր տնօրէնութիւն կարևոր բարեկարգութիւն տալու համար նոյն ուսումնարանին։

Աւարտելով այստեղ մեր վերահասութեան բովանդակութիւնը և նորա հետ միասին և մեր յօդուածը, աւելորդ ենք համարում առնել որ և իցէ տեսակ խորհրդածութիւն, այլ բաւականանում ենք մի անգամ դարձեալ կրկնել սրբազան Պօղոս Առաքեալի խօսքը ԹԷ՝ նաև որ մեղանչեն՝ առաջի ամենեցուն յանդիմանեա՛, զի և այլքն երկիցեն։

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՍՏԱՄԵԱՆՑ։

ՆՈՒԷՐ ԵՒՓԻՄԷ ՏԻՊՆՈՑ։

Վեհարշանաւոր Ս. Գայիանեան Օրիորդաց Ուսումնարանի Հոգաբարձութիւնը, ստանալով այս օրերս Կ. Պոլսեցի Համեստաիայէ Տիկին Եւփիմէ Մազլումեանցից (որ է քոյր մեր Վեհափառ Հայրապետի) տարեկան նուիրաբերութիւնը 400 ռ. արծ. վասն տոյն 1873 ամի, եւ մի Կ. Պոլսեցի աղդասէր պարոնից նոյնպէս 400 ռ. արծ. միանուագ նուէր յօդուտ նոյն ուսումնարանի, սեպուհ պատեհաւորութիւն է համարում իւր հրապարակական շնորհակալութիւն մատուցանել նոցա, եւ մանաւանդ բարեպաշտուհի Տիկին Եւփիմէ Մազլումեանցին, որն լինելով սկզբնական պատճառ բացման այս ուսումնարանի, իբրեւ բարերարուհի եւ միանդամայն Հոգաբարձուհի, միշտ հոգացել է մայրական խնամքով եւ յաճախ այցելութեամբ ոչ միայն ուսումնարանի նիւթական ապահովութեան վերայ, այլ եւ նորա ծաղկման եւ յառաջադիմութեան վերայ։ Արդ իսկ լինելով Կ. Պոլսում անձնական տկարութեան պատճառով, չէ պակասացնում նոյն ուսումնարանից իւր խնամակալութիւնը եւ հեռաւոր տեղից։

Տեսուչ Մ. Դպիրեանց Օրիորդաց
ուսումնարանի վարդապետ
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՍՏԱՄԵԱՆՑ

ի 28 Մարտի 1873 ամի.
ի Ս. Էջմիածին։

ՎԻՃԱԿԱԳՐԻՆ ԴՊՐՈՑ ՅԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ.

Աղերսանդրապօլոյ Հոգեւոր ղպրոցը, բարեպաշտ եւ Աղգասէր Հոգաբարձուց հետ, փոխանորդ Արժ. Սուրիաս վարդապետ Պարզեանցի եռանդուն ջանիւք, վիճակին կարի անհրաժեշտ կարօտութենէն ստիպեալ, հաստատեց թեմական ղպրոցս, վիճակային Դպրոցի վոխարկելոյ կանոնադրութիւնը վեհ. Հայրապետ ամենայն Հայոց հաստատեց հանդերձ օրհնութեան եւ քաջալերական կոնդակաւ։

Ստոյգ այսպիսի նախանձելի եւ անխոնջ ջանքը եւ եկեղեցասէր նպատակը հանդերձ շնորհակալութեամբ կգովեմք, եւ կմխիթարեմք կատողութիւն, յաջողութիւն, եւ յարատեւ արդիւնաւորութիւն։

ՕՐԻՈՐԴԱՑ ՍԱՀԱԿԱՆՈՑՑ ԾԱՅԿԱՆ ԴՊՐՈՑ

Մեզնեպէս հանդերձ շնորհակալութեամբ կհաղորդենք մեր սիրելի Աղդայնոց Աղեքսանդրապօլոյ երկսեռ Հոգեւոր դպրոցաց համայն վարժապետաց եւ տեսչաց այն անծուկը, զի տեղւոյն աղքատիկ օրիորդաց մտաւորական ճշուառ վիճակին կարեկցելով, ըստիպեալ յաղդասիրութենէ, տեղւոյն Ս. Աստուածածնի եկեղեցւոյ հովանաւորութեան ներքեւ բացուելի Սա-

հակառակորդ օրինորդաց ծխական դպրոցին մէջ ծրի պատասխանատուութիւնք անելոյ համար խնդիր մատուցին, ուսոյն եւ վեհ. Հայրապետ սիրով ընդունելով նոցա առաջարկութիւն, հաստատուց առաջարկեալ ծրագիրը:

ՍՈՒՐՀԱՆԴԱՍ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ *)

Ցարաբերութիւն— Մեղուի եւ փոքրիկ երկամեայ դաստապարտութիւն:— Երեսփ. ժողով:— Սեթեան եպիսկոպոսին ամսական:— Վանէն եւ ղրպարտութիւնք եւ մատնութիւնք:— Զրխաւոր եւ քաշակատար աշակերտներ:— Մալաքիայ մէջ:— Գինեղան Այրին վերայ: —10000 ռուբ:— Ազգ. պարտուց հանգանակութեան հաշիւ:— Ալ առակ:— Մամաքիա:— Սահմանադրութեան վերաքննիչ յանձնաժողով:

Անքաղաքագիտական հեռատեսութեամբ Պատրիարքը մեծ պակասութիւն ըրաւ Ճունից հետ բազում տարիներէ ի վեր շարունակուած տեսակցութեան մի յարաբերութիւն դադարեցնելով, որ Ծնունդին և Զատկին կպատահէին:

Մեծ ոճներուն այնպիսի տեսակցութենից փոխադարձ երթևեկութիւնները՝ որչափ և իցէ քաղաքական նշանակութենէն զուրկ չէին և ոչ ապօգուտ երբեմն մեր ազգին ալ:

Ցիրաւի Ճունաց եկեղեցականաց տէտ մասին կրօնամոլութիւնը և տիղ տիղ Քրիստոսի կամաց և հրամանաց բոլորովին ներհակ երբեմն կատարուած գործումնները վիշտ կպատճառեն մեզ, սակայն նոյն իսկ ինքեանք յոյները երբ զգացած էին այն ատելի գործերնին և հետզհետէ ուղղուլու ձգտումներ կցուցնէին, մեզ կվայելէր մեր Ս. կրօնի ազատամտութիւնը և վսեմութիւնը վահան ունենալ, և միշտ վհանձնութեամբ ամէնին զանոնք. ի հարկէ շուտով անոնք ալ նախապաշարեալ կրօնամոլութիւններէն սիրտ հեռանան:

Անշուշտ պատրիարքները երբ կմիանան, իրենց ժողովրդոց և նոյն իսկ իրենց համար շատ լաւ գործեր կարող են արդիւնաւորել: Բայց միմեանց հակառակելով՝ աւելի վնասներ կբաղեն և սիրտ քաղեն:

Երանի՛ թէ կրկին շարունակուէին յարաբերութիւնները, և այն ժամանակ աւելի դիւրին է հետզհետէ յոյները ամաչեցնել իրենց կրօնամոլ գործոց համար և յետս նահանջելու հարկադրել ապատամիտ սկզբունքներով:

*
* *

Ցունվար 17 էն Մեծ շարիվարի հանդիսը, և փետրվարի 7 էն Փոնդ լըզաիրը երկ—երկու ամիս միջոցով դատապարտուեցան:

Ս. Պատրիարքի նկատմամբ՝ առաջինը սիրահ. . պատկեր մը տպած, և վերջինը Կարինէն գըրուած մի նամակ՝ որ անցեալ և ներկայ անհաճոյ ընթացիցն վերայ կդանգատէր, հրատարակած էր:

*
* *

Գոհ ենք որ Երեսփ. Ընդհանուր Ժողով օրինաւոր ընթացքով կշարատւէ, և բաւականին յաջող է:

Առ այժմ վանդներու երկիւղները փարատեցան:

*
* *

Ազգ. Վարչութիւն տեղւոյս դիմալով Գեր. Սիմեան Ցօհ. Եպիսկոպոսի ղառամեալ վիճակին վերայ, որ չէ կարող մի պաշտօն վարել, որոշեց ամսական երկու ոսկի (լիրա) կեպրոնական սընտուկէն տալու, և սկսաւ տալ:

Սոյնպէս ազգային մի ամսական երկու ոսկի, և Ս. Պատրիարքն ալ մէն մի ոսկի սիտի տան, ինչպէս հրատարակած է Փոնդը:

*
* *

Վանէն բաղմաթիւ երեւելի ազգայնոց ստորագրութիւններով բողոքագիր մի խրկուած է Պատրիարքարանին՝ իմանալով որ յանիրաւի ղրպարտութեամբը և մատնութեամբը Պօղոս վարդապետ աքսորուած է, մինչդեռ նորա որ աստիճան Օսմ՝ կայսեր. կառավարութեան հաւատարիմ ըլլալը երեւելի փաստերով ալ կը հաստատեն:

Այս գործը ծանր կերպարանք սիտի առնէ:

Կարծես մենք մեր ձեռքերով մեր տունը կը հարուածենք և կը կործանենք: Ի՞նչ ասեմ՝ այն

(*) Անցեալ փետրվարի ամսագրոյ թերթից անձկութիւն պատճառեց մեր Պօղոյ թղթակցին երկու գրութիւնը միացնել ներկայս մէջ:

Խմբ.

պլուխ . . . Հոգևորականին . . . որուն կրից զոհ կերթան, Վանայ Պօղոս՝ Եւդոկիոյ Յակոբ՝ Սերաստիոյ Կարապետ և այլն և այլն եպիսկոպոս և վարդապետներ։

Իբր թէ Պատրիարքարան միամիտ է՝ բան չգիտեր, և ահա անակնկալ հրամաններ կուգան Բ. դռնէն, և խեղճ մարդը ամենայն պատկառանօք և խոնարհութեամբ կպարտաւորուի կատարելու . . .։

Դու միայն կաս յԵրուսաղէմ՝։

*
**

Ըստ առաջարկութեան Վանօրէից Խորհրդոյ Խառն ժողովն տնօրինեց Արմաշու վանուց վարժարանին մէջ տասն աշակերտ ձրի ընդունել հետեւեալ տեղերէն և դաստիարակել, որպէս զի իրենց թեմերուն մէջ ի ժամանակին օգտաւէտ ըլլան։

1, Սասոյ վիճակէն	3	հատ.
2, Սղերդէն	2	,,
3, Տիրճանէն	1	,,
4, Արճիշէն	1	,,
5, Խարբերդէն	2	,,
6, Քղիէն	1	,,

Նաև Ս Երուսաղէմի և Արմաշու մէջ հաստատեալ վարժարանաց թոշակաւոր աշակերտներ տալ որոշուեցաւ հետեւեալ վանքերէն։

1, Աղթամար.
2, Սերաստիոյ Ս. Նշան.
3, Կեսարիոյ Ս. Կարապետ.
4, Մարգուանու Ս. Աստուածածին.
5, Եւդոկիոյ Ս. Յովհան.
6, Կարնոյ վանքերէն մին.
7, Դաղատիոյ Ս. Աստուածածին.
8, Արղնու Բարձրահայեաց վանք։

Վերի ձրիավարժները Պատուական Վարչութիւնք պիտի ընտրեն ամենէն յաջողակ և ընդունակ պատանիներէն։

Վերջիններս վանքերն իրենք պիտի ընտրեն, և իրենց վանուց սնուցիչն օժանդակին, և յիշեալ երկու վանքերէն որն որ յարմար տեսնեն՝ այն տեղ պիտի խրկեն։

Վերջիններս պարտաւորուած են նաև իւրեանց կարողութեան համաձայն մէն մի վանական դպրոց ալ բանալու, ինչպէս արդէն գրած եմ՝։

*
**

Մալաթիոյ մէջ յուզմունք կաստկանայ մեբաղնէից մէջ

Առաջնորդական խնդիրն է պատճառ, և Առաքել վարդապետը կսիրեն և կուզեն հակառակ Սրապիոն Եպիսկոպոսին։

Վարչութիւն կաղ ի կաղ կերևի այս խնդրոյս մէջ և Առաքելի վերայ վստահ չէ։

*
**

Ս. Ծննդեան պրիսկ վերայ Լատինք կրկին բռնաբարութիւն ի գործ դրին, միայն իրենց սեպհականացնելու համար, ըստ իւրեանց քմից և ախորժակաց՝ իւրեանց յատուկ պատկերներով Բ. պրան ապապարած վարագոյրը շինել և կախել տալով, սակայն Հայոց և Յունաց Պատրիարքներուն բողբին վերայ՝ Բ. Դուռը վերցնել տուաւ, և ուրիշը ապապարեց, այնպէս որ երեք ազգաց համար ալ հաճելի ըլլայ և իւրաքանչիւրոց իրաւանց համաձայն։

Ահաւասիկ ինչ նշանակութիւն և արդիւնք ունեցաւ Յունաց և Հայոց Պատրիարքին Երուսաղէմի միաբան գործողութիւն և աջակից ջանք։

*
**

Այս տեղ մեծ ջանք կայ և Վարչութեան ալ առաջարկուած է ծրագիրն՝ այս ինքն պատ. հայր Օսմանեան ոսկւոյ (չլրա) վիճակահանութիւն բանալ, կէսը յատկացնել ընտանեաց շահողներուն, և կէսը հատուցանել ազգային պարտուց։

Օրտէրն ալ կառաջարկէ որ՝ Ուսումնական խորհրդոյ առաջարկած Վարժապետանոցի ծրագիրն ալ ուշադրութեան առնելով, երկու ծրագիրը միացնել և 5000 ոսկին վարժապետանոցի հատատութեան յատկացնել, որում՝ ազգը անհրաժեշտ և չափազանց մեծ կարօտութիւն ունի, և որ ազգային մէջ վսեմ բարերարութեան վսեմ արգանիքը պիտի ընծայէ Ազգիս։

Ես ալ Օրտէրին համաձայն եմ՝։

*
**

Ազգային պարտքը (որ ոմն հարիւր հազար դահեկանէն աւելի է) հանգանակութեամբ հատուցանելու համար Ս. Պատրիարքին յանձնուած էր, և ընդհակառակ եմք նորին սրբազնութենէն, որ տուած հաշուէն կիմացուի՝ որ երեւ հարիւր հազար դահե-

կանի չափ պարտք հատուցուած և վճարուած է եղեր։

Սակայն զանազան նուիրատուներէն լսուած տրտունջներէն կիմացուի որ 600 լիրային այս ինքն վաթսուն հազար դահեկանէն աւելի պակաս հաշիւ տրուած էր և Ս. պատրիարքին հրատարակած և յանձն առած խոստման վերայ ԶԷ իմ մծոց կայ ԶերՀաշիւ և գուցէ այնքան գումարին աւելի ստակ որ ի ժամանակին պիտի տամ՝ և այլն, առաջիւ լուսած են։

*
**

Այլ տառակ լուսարձակ։

Սոց ախտամղին և ուխտազանցին համար պատահած և կատարուած գործմունքները բաւական չեղաւն, որ այժմ ալ նկեր կատաղարկէ Պատրիարքարանի վարչութեանը, որ իւր խոհուտ Ամռոցը ուրիշ տեղ փոխադրէ օդին վատութիւնը պատճառ բռնելով։

Մի ԶԷ առակ չէր գիտեր Սոց օդը ոչ ապաքէն բնիկ Մարաշեցի է ինքը որ Սսին մծոց է, ուրիմն լաւ գիտէր, ինչո՞ւ հազար յանձնառու եղաւ և այսքան խոստովանանց և տարաձայնութեանց տեղի եղաւ։

Արդէն խիստ ուշացած է, Թող զինքն կատաւարէ, յետոյ աշխատի վերայ խորհի, Թողութիւն որ քեզորովին Սիսը դատարկացնէ, միաբանութիւնը ցրուեր, վանքն կատարեալ քանդ աւերակ դարձներ, և ժողովուրդն նախ շատ տեղեր յուսահատեր է, ինչպէս այն կոմսին գրուածները կարդացեր եմ, կարելի է գուք ալ Մանչուէի մէջ հրատարակուած մի նամակ կարդացած կըլլաք, որ գանձապէս կանգատէր։

Ոզորմելի Սսամոլք որչափ մեծ գործ տեսած եղան. երեսին ճերմակ — Կարելի է այսուհետև աւելի կունենամ այս մասին ալ ևս գրելու։

*
**

Սամաթիա՝ վերջին անգամ Օրթէյէ և Մանչուէի մէջ պատահած գրաւիչ ճանապարհորդն յետոյ յաջորդած հաշտութիւնն ի վեր՝ ցաւալի տեսարան կներկայացնէ։ Թող. խորհուրդ չկայ. ժողովուրդն երկպառակութեանց մատնուած է. գրսէն և ներսէն գրգռողներն անպակաս են, աղօթատ հաստատութիւնները՝ մանաւանդ հիմնական ուսումնարանները գրեթէ բարձի Թողի եղած, և կեղեցին պրեացաւեր վիճակին մէջ սպագնայ կուլայ։

Վարչութիւնն շատ կաշխատի խաղաղութիւնն վերահաստատելու։

Տացէ Տէր՝ որ շուտով յաջողի։

*
**

Վերջապէս Սահմանադրութեան վերաքննութեան համար մի Մասնաժողով կազմուեցաւ, որոյ անդամք հետևեալներն են։

Գեր. Նիկողայոս Եպիսկոպոս Աղասեան
Արժ. Մատթէոս վարդապետ Իզմիրլեան
,, Դաւոնդ ,, Փիլոզաքեան
Բարեկ. Յովհաննէս քհնյ.
Մեծ. Ցարութիւն Պէյ Տատեան
,, Կարապետ Էֆ. Գարակէօզեան
,, Օգսէնտ ,, Խոճասարեան
,, Թադէոս ,, Պեկեան
,, Մատթէոս ,, Ալվատեան
,, Քրիստոստուր ,, Ղազարոսեան
,, Տիլեմաք ,, Էքսէրձեան
,, Բարսեղ ,, Տիւրկերեան
Մնամ Լայլն։

Խ. Ս. ՀԱՑԿ. . . .

1873 Փետրվ. 10, Ի Մարտ 3։
ի կ. Պոլիս.

ԿԱՐԵՒՈՐ

Գիտութիւն սղնախի. . . յօդուածի նախընթաց մասնում (Արարատ փետրվարի) մնել էին երկու վրիպակ.

սխալ	ուղիղ
ՀԵռուէռոյ,	յԵռոյ (եր. 79, էջ առաջին, տող 4—րդ)
դիւրաբանութիւն,	դիւրացաբանութիւն (,, ,, 7—րդ)

Դա եւ նեկայ թուոյս երրորդ երեսում (83 րդ երես) երկրորդ էջին ներքեւ առաջին ծանօթութեան մէջ պէտք է

պարխար	կարդալ	պարսից
զոյս	,,	զայս
գիտ	,,	գետ
կլլեին	,,	կոչեին
Շահբանիման	,,	Շահբահման
ասլին	,,	տալին
կիւրակոսի	,,	կիւրոսի։